ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԳՈՐԻՍՈՒՄ. ՍԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1890-1920 ԹԹ.)

Զանգեզուրի գավառակենտրոն Գորիսում Սբ. Հռիփսիմե եկեղեցական-ծխական դպրոցը հիմնադրվել է 1890-1891 թթ. ուսումնական տարում: Հիմնադրումից ի վեր՝ դպրոցը նվիրվել է բացառապես ազգօգուտ գործունեության՝ կրթելով ու դաստիարակելով բազմաթիվ երեխաների: Դպրոցի գործունեությունը որոշակի կանոնակարգված հիմքերի վրա է դրվել, երբ ավագ ուսուցչի պաշտոնը ստանձնեց ծնունդով գորիսեցի, XX դարասկզբի բազմաշնորհ ու լուսամիտ գործիչ մանկավարժ, հրատարակիչ-խմբագիր Սիմեոն Տեր-Մինասյանը: Ընդհանրացնելով Սբ. Հռիփսիմեի եկեղեցական-ծխական դպրոցն անգնահատելի դեր է ունեցել ոչ միայն Գորիսի, այլև ամբողջ գավառի կրթամշակութային կյանքում:

Բանալի բառեր՝ *Գորիս, Սբ. Հռիփսիմե, եկեղեցական-ծխական դպրոց, ավագ ուսուցիչ, հոգաբարձուների խորհուրդ, Կենտրոնական դպրոց:*

Սյունյաց պատմական Հաբանդ գավառի Ձագաձորի հովտի Վարարակն գետի ձախափնյակում՝ Լաստի խութ լեռան հյուսիսային լանջերն ակոսող գեղատեսիլ ձորակում, XVIII դ. 60-ական թվականների վերջերին Մեծ Մելիք-Օհանի կողմից Ղարաբաղի խանության ենթակայությամբ հիմնարկվել է մելիքանիստ կիսաանձավային Գորիս-Կյորես գյուղը: Պատմահնագիտական նյութերն ապացուցում են, որ տակավին վաղ ժամանակներից այդտեղ գոյություն է ունեցել բնակավայր: Բնակատեղիի հեռավոր անցյալի վկաներից է գյուղից հյուսիս-արևելք՝ լեռնալանջի բարձրության վրա, «Ճգնավորաց» լեռան ստորոտում գտնվող կիսաժայռափոր Սբ. Մարտիրոս մատուռը (X-XI դդ.), որը եղել և մնում է տարածաշրջանի նշանավոր սրբատեղիներից մեկը: Նորահիմն բնակավայրում Մելիք-Օհանի ձեռնարկած շինարարական-կառուցողական աշխատանքները նախ սկսվում են ամրոցակերպ մելիքական նստոց-կենտրոնի՝ ապարանքի կառուցմամբ: Մելիք-Օհանի շինարարական գործունեության հաջորդ ձեռնարկը՝ եկեղեցաշինությունն էր: Նա «Խաչերի ձոր» թաղում՝ փոքրիկ բլրալանջի վրա, 1776 թ. կառուցում է Սբ. Հռիփսիմե եկեղեցին[1]: Ձեռագրական

1 Տեղին նշենք, որ Գորիս գյուղի հուշարձանների արձանագրությունները հրատարակած Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանի և Սեդրակ Բարխուդարյանի մոտ հիշատակված չեն սույն եկեղեցու կառուցման վերաբերյալ որևէ վիմագրական տեղեկություն: Այդ բացը լրացվեց 2006 թ. հուլիսի 15-ին, երբ տողերիս հեղինակի ղեկավարությամբ և վիմագրության դասախոս Արտակ Գզոյանի մասնակցությամբ Գորիսի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողների հնագիտական և վիմագրագի-տական պրակտիկայի ժամանակ ուսանողների ջանադիր աշխատանքի արդյունքում ամբողջությամբ մաքրվեց գոմի վերածված եկեղեցին, բացվեց քարապատված արևմտյան դուռը, սվաղի հաստ շերտից մասամբ մաքրվեցին նաև պատերն ու մույթերը: Հարավային մուտքի բարավորի սվաղը մաքրելու ժամանակ բացվեց եկեղեցու հիմնման մինչ այդ անհայտ մնացած պարզ, փոքրիկ կցագրերով քառատող հետևյալ արձանագրությունը. «ՅԻՇԱՏ[Ա]Կ Է/ԵԿԵՂԵՑԻՍ ՊԱՂ/ԸՐԻ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ/ՈՀԱՆԻՆ: ԹՎ [Ի]Ն ՌՄԻԵ (1776)» (**Ստեփանյան Գ.**, Գորիս, Դաշտային հետազոտական նյութեր (2006 թ.), տետր № 1, էջ 2): Արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

աղբյուրները փաստում են, որ XVIII դ. 80-ական թվականների սկզբներին Գորիս գյուղը տակավին համարվում էր Տաթևի վանքի վանքապատկան գյուղերից մեկը: 1823 թ. դրությամբ գյուղն ուներ 118 ծուխ[1]: Համայնքի սոցիալական կազմը պարզունակ էր. բաղկացած էր հիմնականում արտոնյալ ու հարկատու դասերից: Գյուղն ապրում էր սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային բնականոն կյանքով:

Ինչպես արևելահայ մյուս գյուղերում, Գորիսում ևս կրթական կյանքն առաջ մղելու նախապայմաններ էին՝ լուսավորական գաղափարների տարածումը և դպրոցների բացումը: Լուսավորության հարցը մտահոգում էր բոլոր նրանց, ովքեր տոգորված էին հայրենիքին ծառայելու պատրաստակամությամբ: Այս առումով մեծ է հատկապես բնիկ գորիսեցի, հնահիմք Մինասանց տոհմից սերող, գյուղի ծխական քահանա Մինաս ավ. քհն. Տեր-Մինասյանի դերը ոչ միայն հոգևոր-եկեղեցական գործունեության մեջ, այլև կրթական-լուսավորչական բնագավառում: Այսպես՝ արխիվային վավերագրերը փաստում են, որ Գորիս գյուղի առաջին և երախտաշատ մանկավարժը եղել է Մինաս ավ. քհն. Տեր-Մինասյանը, որը, լինելով ժամանակի բազմակողմանի զարգացած առաջադեմ հոգևոր գործիչ և ուսումնասեր անձնավորություն, բացել էր մասնավոր կամ խալֆայական տիպի դպրոց, կրթել ու դաստիարակել գյուղի երեխաներին[2]: Դպրոցում ուսուցանվել են եկեղեցական պարզունակ գիտելիքներ պատարագի և ժամասացության մասին: Աշակերտը, դպրոցն ավարտելով, կարող էր կարդալ Աստվածաշունչը, երգել շարականներ: Այս դպրոցում ուսանած Մինասանց տոհմից սերող մեկ այլ նշանավոր հոգևոր գործիչ Հակոբ քհն. Տեր-Մինասյանն իր հուշերում վկայում է. «Տողերիս գրողը դեռ 8 հասակից տուել են կարդալ գրել սովորելու, այն ժամանակը Զանգեզուրումը ոչ մի ուսումնարան [չի եղել], միայն Գորիս գիւղում և Խնծորէսկ գիւղում ծմեռվայ ժամանակները անհատ տիրացուներ ունենում էին ուսումնարան անուամբ: Իբրև ուսումնարան սովորեցնումին Սաղմոս, Ժամագիրք և Աւետարան, մասամբ ռուսէրեն: Ես էլ այստեղ էի սովորում»[3]:

Մինաս ավ. քհն. Տեր-Մինասյանը, ով հայտնի էր որպես անբիծ և պարկեշտ հոգևորական, իր աստվածահաճո ու հայրենանվեր գործունեությամբ բարի համբավ է թողել սերունդների հիշողության մեջ: Լինելով գյուղի լուսավորիչը, իր մատուցած ծառայությունների շնորհիվ, նվաճել էր գյուղացիների սերն ու հարգանքը: Անգամ գյուղի միակ՝ Սբ Հռիփսիմե եկեղեցին, որտեղ տարիներ ի վեր նա քահանայագործել էր, հաճախ կոչում էին նաև նրա անունով: Որպես, օրինակ, Ս. Խանզադյանը «Հորս հետ և առանց հորս» ինքնակենսագրական վիպակում գրում է. «Մեր բերդաթաղի եզրին, որտեղ ժայռերը մի փոքր մեղմանում էին, սպիտակ պատերով եկեղեցի կա: Լրիվ սպիտակ: Ես զարմանում էի, թե ինչու են նրան սուրբ Մինաս ասում և ոչ թե Սպիտակ»[4]:

1868 թ. փետրվարի 19-ին Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի ստեղծումից

1 Տե՛ս Описание Карабагской провинции (Магал Тативский (б.с.), տե՛ս նաև Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 93, g. 1, գ. 163, թ. 114-115:

2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, g. 15, գ. 31, թ. 19:

3 ՀԱԱ, ֆ. 798, g. 1, գ. 1220, թ. 139:

4 **Խանզադյան Ս.**, Հորս հետ և առանց հորս (ինքնակենսագրական վիպակ), Երևան, 1986, էջ 9: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Սբ Հռիփսիմե եկեղեցին պատվել է սպիտակ կրաշաղախով, ինչը պարզ երևում է XX դարակեսին կատարված լուսանկարներում:

հետո, Գորիս գյուղաքաղաքը դառնում է նորաստեղծ Զանգեզուրի գավառի վարչական կենտրոնը: XIX դարավերջին Գորիսն արդեն իսկ ապրում էր սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային վերելք: 1869-1870 թթ. ուսումնական տարում հիմնված Սբ Ստեփանոսի[1] եկեղեցական-ծխական դպրոցը[2], որի առաջին ուսուցիչներից էր Մինաս ավ. քհն. Տեր-Մինասյանի հիմնած դպրոցում ուսանած նրա թոռը՝ Սարգսի որդի Հովհաննեսը (Օհան): Հենց նրա ուսերին էր դրված պապի վառած ջահը վառ պահելու, նրա գործը շարունակելու ազգանվեր առաքելությունը: Սյունյաց փոխանորդության առաջնորդ Հովհաննես արքեպս. Ասլանյանցի (1870-1873 թթ.)՝ 1872 թ. ապրիլի 1-ին կազմած և Էջմիածնի Սինոդին ներկայացրած «Ցուցակ Հոգևոր ուսումնարանաց եղելոց ի յաջորդութեան Տաթևու» տեղեկագրում նշված է, որ «Կօրիս գիւղաքաղաքի» ուսումնարանի ուսուցիչն էր Հովհաննես (Օհան) Տեր-Մինասյանը: Տեղեկագրի՝ «Անուանք ուսուցչաց, թէ՝ ո՞ր Տերութեան հպատակ են նոքա և ու՞ր կրթեալ» սյունակում գրված է. «Յովհաննես Տէր-Մինասեանց Կօրիսէցի, հպատակ նոյն Տերութեան, կրթեալ առ պապ իւր Մինաս քահանայն»[3]:

Զանգեզուրի առաջին գավառապետ Պյոտր Ստարիցկիի օրոք 1870 թ. Գորիս գյուղից արևմուտք, Վարարակն գետակի աջափնյա ընդարձակ և հարթ տարածության վրա հիմնվում է գավառակենտրոն Նոր Գորիսը: Բարձրադիր և զառիթափ լեռնալանջերի միջև ընկած փոքրաթեք դարավանդային տափարակն առավել հարմարավետ էր որպես քաղաքատեղի և ուներ ընդարձակման հեռանկար: Հնի և նորի սահմանագծում նորահիմն Գորիսում XIX դարավերջը նշանավորվեց ազգային ինքնագիտակցության բուռն վերելքով: Պայմաններ ստեղծվեցին կրթամշակութային զարգացմանը՝ իրենց բոլոր դրսևորումներով: Գորիսը թևակոխեց պատմական կյանքի մի նոր փուլ, որի զարգացման գրավականը անառարկելիորեն նոր առաջադեմ հայացքներն էին:

---

1 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 157, թ. 1:

2 Տե՛ս **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ. (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1987, էջ 118: Դպրոցում ավանդվել է հայերեն ընթերցանություն, վայելչագրություն, եկեղեցական երգեցողություն, կրոն և քերականություն (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, g. 15, գ. 31, թ. 19): Դպրոցը պահվել է ի հաշիվ «դրամոք ծնողաց աշակերտաց» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, g. 15, գ. 31, թ. 39): Ի դեպ, այս դպրոցում է սովորել Ակսել Բակունցի հայրը՝ Ստեփան Թևոսի Բակունցը (տե՛ս **Բակունց Վ.**, Մեծ հույզերի սերմնացանը, Երևան, 1976, էջ 7): Որոշ դժվարությունների պատճառով դպրոցը որոշ ժամանակ դադարել է գործելուց: Վերաբացվել է միայն 1882 թ.՝ գավառապետ Անտոն Յակովլևիչ Կարաև-Կարայանի (1878 թ.-1888 թ. հունիս) հրամանով (տե՛ս Զանգեզուրից, «Նոր-Դար», Թիֆլիս, 1884, սեպտեմբերի 4, N 140): 1885 թ. ամռանը Գորիս գյուղ (Նոր կամ Ներքին Գորիս) այցելած Ստեփան Զելինսկին (Մկրտչյան) վկայում է, որ գյուղն ուներ գործող ուսումնարան (տե՛ս Зелинский С., Экономический быть государственных крестьянь вь Зангезурском уезде Елисаветпольской губерни-и, «Материалы для изучения экономическаго быта государственныхь крестянь Закавказскаго края» (այսուհետ՝ МИЭБГКЗК), т. IV, Тифлис, 1886, Тифлис, 1890, ñ. 119): Դպրոցի՝ 1880-ական թվականների գործունեության վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է հայտնում Հովհաննես Պարոնյանը (Յապոն). «Այդ ժամանակ մեր գիւղի (Նոր կամ Ներքին Գորիսի - Գ. Ս.) այդ «շկոլ»-ը Զագեձորի գիւղերի միակ դպրոցն էր, որտեղից Ղափանի Շիկահող գիւղացի ալեհեր Գրիգոր վարժապետը (Գրիգոր Տեր-Գրիգորյանը - Գ. Ս.) «լոյս ու գիտութիւն» էր տարածում իր կարողութեան չափով: Ոչ ոք չէր յիշում, թէ Գրիգոր վարժապետը ե՞րբ էր եկել մեր ծորը. ոչ ընտանիք ունէր, ոչ տնտեսութիւն. ապրում էր դարվիշի նման, օրը օրին, աշակերտներից ստացած հաց ու պանիրով, կամ պղնձէ դրամներով: Ու մինչեւ իր կեանքի վերջն էլ նա մնաց Գորիս գիւղում՝ առաւօտից մինչեւ երեկոյ իր գլխին հաւաքած երեխաներին ժամագիրք, այբբենարան կարդացնելով, հաշիւ, գրել սովորեցնելով» (**Յապօնի** (**Յովհաննէս Պարոնեան**) յուշերը: Գրեց՝ **Տերունի Յ.** [**Հակոբ Տեր-Պողոսյան**], «Հայրենիք», Պոսթըն, 1940, ԺԹ տարի, դեկտեմբեր, N 2, էջ 115):

3 ՀԱԱ, ֆ. 56, g. 15, գ. 31, թ. 19:

Գավառակենտրոնի առաջին ուսումնական հաստատությունը՝ 1876 թ. դեկտեմբերի կեսերից գործող պետական (արքունի) կամ «ռուսական» ուսումնարանն էր (Герюсинское казенное нормальное сельское училище)[1]: Ա. Բակունցի պատկերավոր արտահայտությամբ՝ «Գորիսն ուներ մի թագավորական ուսումնարան՝ ռուսաց շկոլը...»[2]: Բացման տարում ուսումնարանը եղել է միդասյա (երկդասյա է դարձել 1882 թ. հոկտեմբերի 1-ին)[3] և ունեցել է 72 հայ և 1 ռուս աշակերտ[4]: Ուսումնարանում մեծ մասամբ սովորում էին բեկերի, վաճառականների և հոգևորականների երեխաները[5]: Ուսումնարանի պատվավոր վերակացուն էր Գորիսում և տարածաշրջանում մեծ հեղինակություն վայելող Մանուչար բեկ Մելիք-Հուսեինյանը[6], որին հաջորդել է Իվան Սուշևսկի-Ռակուզան[7]: Ուսումնարանի առաջին տեսուչն ու ուսուցիչն էր Հովհաննես Ղազարի Տեր-Միքայելյանը[8]: Այնուհետև տեսուչ և ուսուցիչ են աշխատել Իվան Վենեդիկտի Բեսսարաբան[9], կոլեգիական ռեգիստր Եփրեմ Մելիք-Շահնազարյանցը[10], Միքայել Սերգեյի Պողոսյանը[11] և Իվանովը[12]: Ուսումնարանի գործունեությունն առանձնապես արդյունավետ էր վաստակաշատ մանկավարժ, տիտուլյար խորհրդական Սադաթ Սերգեյի բեկ Սաֆրազբեկյանի[13] տեսչության տարիներին (1908-1914 թթ.)[14]: Տարբեր տարիների դպրոցում դասավանդել և գավառի կրթական գործում մեծ ավանդ են ներդրել ժամանակի ճանաչված մանկավարժներ Հարություն Հարությունյանը[15], Մկրտիչ Սարգսյանը, Լևոն Միքայելյանը (Լևոն Սյունեցի), Բոգդան Բագդատևը, Բորիս Սկաբիչևսկին, Գեոր-

---

1 Տե՛ս **Зелинский С.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, с. 121, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1876, դեկտեմբերի 2, N 46, տե՛ս նաև Кавказский календарь на 1891 г. (այսուհետ՝ КК), отд. Адрес-календарь, с.181, տե՛ս նաև **Գրիգորյան Ա.**, Նախասովետական Զանգեզուրի դպրոցական կյանքից (1870-ական թթ.-1917 թ.), էջ 246:

2 **Բակունց Ա.**, Կյորես, Ընտրանի, էջ 374:

3 Տե՛ս **Зелинский С.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, с. 121, տե՛ս նաև КК на 1893 г., Тифлис , 1892, отд. Адрес-календарь, с. 240.

4 Տե՛ս նույն տեղում:

5 Տե՛ս նույն տեղում:

6 Տե՛ս КК на 1884 г., Тифлис, 1883, отд. IV, с. 90.

7 Տե՛ս КК на 1893 г., отд. Адрес-календарь, с. 240.

8 Տե՛ս КК на 1878 г., Тифлис, 1877, ч. II, отд. II, с. 83, տե՛ս նաև КК на 1879 г., Тифлис, 1878, отд. III, с. 72.

9 Տե՛ս КК на 1884 г., отд. IV, с. 90.

10 Տե՛ս **Գ.Տ.Գ.** [**Գրիգոր Տեր-Գրիգորյան**], Նամակ Գորիսից, «Մշակ», Թիֆլիս, 1890, նոյեմբերի 22, № 134:

11 Տե՛ս КК на 1899 г., Тифлис, 1898, с. 325.

12 Տե՛ս ՀՊԹ, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, Գ.Գ., N 4197:

13 Սադաթ բեկ Սաֆրազբեկյանը (1860-1940 թթ.) եղել է Սիսիանի Բռնակոթ գյուղից Գորիսում հաստատված Մելիք-Սաֆրազբեկյանների շառավիղներից: Ավարտել է Շուշիի ռեալական ուսումնարանը: Կինն էր Սաթենիկ Հարությունյանը (1879-1959 թթ.): Ունեցել են հինգ տղա (Գևորգ, Արտո, Գուրգեն, Ալեքսանդր, Ջավադ) և մեկ դուստր՝ Թագուհին: Սադաթ բեկ Սաֆրազբեկյանը եղել է «Կովկասի Հայոց բարեգործական ընկերության» Գորիսի մասնաճյուղի անդամ (տե՛ս Տեղեկագիր Կովկասի Հայոց բարեգործական ընկերության 1909 թ. գործունեութեան, Թիֆլիս, 1910, էջ 54):

14 Տե՛ս КК на 1909 г., Тифлис, 1908, Адрес-календарь, с. 366,տե՛ս նաև КК на 1910 г., Тифлис, 1909, ч. II, Ад-рес-календарь, с. 394,տե՛ս նաև ՀՊԹ, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, Գ.Գ., N 4197:

15 Տե՛ս նույն տեղում:

գի Շարոգրադսկին[1], Հովհաննես Գրիգորյանը[2], Սիմեոն Շահվերդյանցը[3], Խորեն քհն. Մելիք-Դադայանը[4], Սարգիս Մուսայելյանը[5] և ուրիշներ:

* * *

Լուսավորության և նոր սերնդի դաստիարակության գործը չէր սահմանափակվում միայն արդեն գոյություն ունեցող պետական դպրոցով, ուստի ժամանակը հրամայաբար պահանջում էր բացել եկեղեցական-ծխական կանոնավոր դպրոց, որն իր նպատակադրումով պետք է տարբերվեր պետական դպրոցից: Այդ հանգամանքն է, որ դրդեց գավառակենտրոնի ազգային լուսավորության գաղափարներով տոգորված առաջադեմ գործիչներին աշխատանքներ տանել ծխական դպրոց բացելու ուղղությամբ:

Թեև 1880-ական թվականների վերջերին գավառակենտրոնում գործում էր տիրացուների և քահանաների նախաձեռնությամբ բացված և ցարական իշխանությունների կողմից ոչ մի հսկողության չենթարկվող խիստ ցածր մակարդակ ունեցող մասնավոր ուսումնարան[6] (փակվել է 1888 թ. սեպտեմբերին)[7], սակայն այդտեղ հաղորդվող գիտելիքների չափն ու բովանդակությունը կախված էր «ուսյալ» վարժապետի խղճից ու կարողությունի: Ուշադրության է ար-

1 Տե՛ս КК на 1880 г., Тифлис, 1879, Адрес-календарь, с. 83, տե՛ս նաև КК на 1891 г., Тифлис, 1890, Адрес-календарь, с. 181, տե՛ս նաև КК на 1893 г., տե՛ս նաև КК на 1900 г., Тифлис, 1899, Адрес-календарь, с. 346, տե՛ս նաև КК на 1909 г., Тифлис, 1908, Адрес-календарь, с. 366, 373, տե՛ս նաև КК на 1910 г., Тифлис, 1909, ч. II, Адрес-календарь, с. 394.

2 Տե՛ս Հայաստանի պատմության թանգարան, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ գլխավոր գույքամատյան, N 4197:

3 Տե՛ս **Յով. Դան.** [**Հովհաննես Դանիելյան**], Նամակ Գօրիսից, «Մշակ», Թիֆլիս, 1890, սեպտեմբերի 27, N 110, տե՛ս նաև **Ս.Շ.** [**Սիմեոն Շահվերդյանց**], Ճանապարհորդական նկատողութիւններ, «Նոր-Դար», Թիֆլիս, 1887, հոկտեմբրի 16, N 175:

4 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Հայաստանի պատմության թանգարան, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ գլխավոր գույքամատյան, N 4197, տե՛ս նաև **Հոտաղ** [**Հակոբ Տեր-Հակոբյան**], Մեր գաւառի դպրոցները, «Աշխատանք», Թիֆլիզ, 1906, մայիսի 21, N 17, էջ 270: Խորեն քհն. Մելիք-Դադայանը (1844-1940 թթ.) 1883 թ-ից եղել է Գորիս գյուղի և քաղաքի ծխատեր քահանան (տե՛ս «Գաւառ», Գօրիս, 1910, ապրիլի 4, N 14): Իր իսկ վկայությամբ՝ «1883 թւին ձեռնադրւելով Գօրիս գիւղի վերայ, մինչև օրս փոխ առ փոխ... հովւել եմ Գօրիս գիւղի և քաղաքամասի ծխերը: Իսկ 1904 թւին երբ քաղաքամասի Ս. Լուսավորիչ եկեղեցին օծւել է, այնուհետև ևս շարունակել ենք փոխ առ փոխ հովւել գիւղիս Ս. Հռիփսիմէ և քաղաքի Ս. Լուսաւորիչ եկեղեցիների ծխերը» («Գաւառ», Գօրիս, 1910, մայիսի 2, N 17):

Խորեն քհն. Մելիք-Դադայանի երկարատև եղեցական սպասավորության արգասավոր վաստակը գնահատվել է պատվո նշանով: Խրիմյան Հայրիկի՝ 1900 թ. ապրիլին արձակած Հայրապետական կոնդակով նրան շնորհվել է քահանայական լանջախաչ կրելու իրավունք (տե՛ս Պաշտօնականք: Քաղուածք կոնդակաց Վեհ. Հայրապետի, «Արարատ», Վաղարշապատ, 1900, N Ե, էջ 228):

5 Սարգիս Գրիգորի Մուսայելյանը (1901 թ. ավարտել է Գորի քաղաքի ուսուցչական սեմինարիան), ով հետագայում դարձավ բոլշևիկյան կուսակցության նշանավոր գործիչ, ուսումնարանում մարմնամարզություն է դասավանդել 1911 թ. սեպտեմբերի 8-ից: Մինչ այդ՝ նա ութ տարի որպես տեսուչ և ուսուցիչ է աշխատել Նուխիի գավառի Սաբաթլու հայկական գյուղում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1441, ց. 1, գ. 14, թ. 1-3): Ի դեպ՝ Գորիսում աշխատած տարիներին, Ս. Մուսայելյանը զբաղվել է նաև գրական գործունեությամբ, գրել է պիեսներ: «Զանգեզուր գալով,- ասվում է նրա կենսագրությունում,- նա կրկին նվիրվում է լուսավորական գործին և ուսուցչի պաշտոն ստանձնում: Ազատ ժամերին ընկեր Մուսայելյանը գրում է «Փախուստի վրա» կատագերգությունը և նկարագրում է նույնպես զանգեզուրցիների և լեռնային ղարաբաղցիների բարքերն ու կենցաղը» (Ընկեր Սերգեյ Մուսայելյան (կենսագրական ակնարկ), «Խորհրդային Հայաստան», Երևան, 1923, օգոստոսի 15, N 178):

6 Տե՛ս **Ս. Շ.** [**Սիմեոն Շահվերդյանց**], Գեօրեսից, «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, փետրվարի 12, N 17:

7 Տե՛ս **Ս. Շ.** [**Սիմեոն Շահվերդյանց**], Գեօրիս, «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, սեպտեմբերի 30, N 159:

ժանի պետական դպրոցի ուսուցիչ Սիմեոն Շահվերդյանցի՝ «Նոր-Դարում» զետեղած թղթակցությունում Գորիսում և հարակից գյուղերի (Քարահունջ, Տեղ, Խնձորեսկ) մասնավոր ուսումնարանների վերաբերյալ բնութագրումը. «...ինչպէս նկատում ենք, մի քանի ամսից յետոյ այդ սունկի նման բուսնող ուսումնարանները ծխի նման էլ անհետանալու են, որովհետև շինած են աւազի վերայ՝ մի քանի գիւղացիների ձեռքով և ոչ ոք չկայ, որ այդ մի քանի գիւղացիների ձեռքերի հետ միացնէ և միւս գիւղացիների ձեռքերն և ուսումնարանը շինէ ամուր ապառաժի վերայ»[1]:

Կանոնավոր դպրոցի բացման ուղղությամբ առաջին քայլերը ձեռնարկվեցին 1887 թ.: Նախաձեռնողն էր Երևանի թեմի Սյունյաց փոխանորդության առաջնորդ Անանիա վրդ. Համազասպյանը (1887-1893 թթ.)[2]: Այդ նպատակադրումով նա Գորիս և հարակից գյուղեր է ուղարկում ճեմարանավարտ մի երիտասարդի, որը, սակայն, հանդիպելով մասնավոր ուսումնարանի «...մղդսի ուսուցչի» արգելքներին, ստիպված է լինում ձեռնունայն վերադառնալ[3]:

Չնայած դրան՝ գավառակենտրոնի առաջադեմ հայացքներ ունեցող մտավորականներն ու ուսման հարգը գնահատող մի քանի հանրաճանաչ մարդիկ չնահանջեցին իրենց դիրքերից: Եկեղեցական-ծխական դպրոց բացելու ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկեց ժամանակի ճանաչված մտավորականներից մեկը՝ պետական դպրոցի ուսուցիչ Սիմեոն Շահվերդյանցը, որին աջակցում էին նույն դպրոցի կրոնուսույց Խորեն քհն. Մելիք-Դադայանը, Պարոնյան մեծահարգ տոհմից սերող կոլեգիական քարտուղար Հարություն բեկ Պարոնյանցը[4], Սերգեյ Միրումյանը և Բալի Հարությունյանը[5], լուսավորելու միջոցով առաջադիմության հասնելու նրանց սկզբունքը գավառահայ իրականության համար նորություն էր և հեղաշրջիչ նշանակություն ունեցավ:

Թեև դպրոցի բացման համար գորիսեցի երևելիներից ընտրվել էր հոգաբարձուների խորհուրդ, այսուհանդերձ, խնդրի լուծումը ձգձգվում էր: Ս. Շահվերդյանը «Նոր-Դարին» 1888 թ. նոյեմբերին հղած թղթակցության մեջ գրում էր. «Ահա մի տարին լրանում է, որ հարց է բարձրացրած Գեօրիսում հայոց ծխական ուսումնարան բանալու մասին: Քանի գործը տաք էր՝ հոգաբարձուներ ընտրեցին, եկեղեցում այդ մասին քարոզներ ասացին, առաջին տպաւորութեան տակ ինչե՞ր չպատահեցան: Թէ գիւղացիները ինչպէս վերաբերուեցին դէպի ուսումնարանի բացման գործը՝ աւելորդ է ասել. միայն դժբաղդաբար, մինչև այժմ գործը մի մխիթարական ելք չէ ստացել»[6]: Դպրոցի հիմնմանը ձեռնամուխ վերոնշյալ «ուսումնասէր զաւակների ջանքով և հոգսով» 1889 թ. հունվարի 7-ին Սբ Հռիփսիմե եկեղեցում մեծաթիվ ծխականների մասնակցությամբ հրավիրված ժողովում, քահանայի քարոզից հետո, հավաքվածները միահամուռ ստորագրում են՝ «...համախօսական վճիռը երկդասեան դպրոց բանալու, յատկացնելով դպրոցին 2000 ր. արդիւնք բերող հողերը ամեն մի տա-

1 **Ս. Շ. [Սիմեոն Շահվերդյանց]**, Գեօրեսից, «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, փետրվարի 12, N 17:

2 Տե՛ս **Արտակ եպս. Սմբատեան** (**Տաւուշեցի**), Համառօտ պատմութիւն Տաթեւի վանքի, «Տաթեւ» (Տարեգիրք գրականութեան եւ արուեստի), Զ տարի, Հալէպ-Սուրիա, 1930, էջ 350:

3 **Ս. Շ.** [**Սիմեոն Շահվերդյանց**], Գեօրիս, «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, յունիսի 28, N 103:

4 Տե՛ս **Յով. Դան.** [**Հովհաննես Դանիելյան**], Նամակ Գօրիսից, «Մշակ», Թիֆլիս, 1890, սեպտեմբերի 27, N 110:

5 Տե՛ս Գեօրիսից, «Նոր-Դար», Թիֆլիս, 1889, յունվարի 18, N 5:

6 **Ս. Շ. [Սիմեոն Շահվերդյանց]**, Գեօրիս, «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, նոյեմբերի 24, N 197:

րի շարունակ տալով ուսումնարանին»[1]: Հօգուտ նոր կառուցվող դպրոցական շենքի, ժողովականների կողմից տրամադրվում է 300 դեսյատին վարելահող, իսկ մեծահարուստները խոստանում են դրամով օգնել[2]:

Սակայն ծխական ժողովի կայացրած որոշման իրականացումը ինչ-ինչ պատճառներով անորոշ ժամանակով ձգձգվում է: Ինչպես ասվում է Գորիսից «Նոր-Դարին» ուղարկված թղթակցությունում, «Զարմանալի մարդիկ են գեօրիսեցիները, այնքան հարստութիւն, այնքան փող ունեցող անձերն ամենևին ուշք չեն դարձնում իրենց զաւակների ուսման վրայ: Անցեալները տաք տաք բարձր բարձր խօսում, գոռում գոչում էին փողոցներում այդ հարուստները, ուսումնարանի բացման համար փող էին հաւաքում, հանգանակութիւն էին անում, բայց բոլորը իզուր անցաւ. մեծ մեծ խօսողները այսօր լուռ ու մունջ նստած են...»[3]:

Հուսահատությունը չէր պատել միայն նախաձեռնող խմբի անդամներին, ովքեր անդուլ ջանքերով շարունակում էին կիսատ մնացած գործը ավարտին հասցնել: Հովհ. Դանիելյանը Գորիսից «Մշակին» ուղարկած թղթակցությունում գրում է. «Թէպէտ այդ անձինքները զանազան տեսակ մարդկանց կողմից կամայականութիւնների և արգելառիթների հանդիպեցան, բայց միևնոյն ժամանակ, չը յուսահատվելով, սկսեցին ամեն ջանք գործ դնել, տոկունութեամբ և եռանդով աշխատել, հասկացնելով ժողովրդին ուսման բարձր նշանակութիւնը...»[4]:

Եվ, ահա, շուրջ երեք տարի տևած ջանադիր աշխատանքների արդյունքում, բազում դժվարությունների հաղթահարումով գործը գլուխ է բերվում: Դրանում իր մեծ ներդրումն է ունեցել Երևանի թեմի փոխառաջնորդ[5] Սուքիաս եպս. Պարզյանցը[6], որը կրթալուսավորական բազմարդյունք գործերով և իբրև մեկենաս բազմաթիվ հրատարակությունների՝ հայ եկեղեցու պատմության մեջ թողել է ուսումնասերի, շինարարի և, առհասարակ, «ազգային-եկեղեցական իրաւանց պաշտպանի» բարի համբավ[7]: Սուքիաս եպս. Պարզյանցի՝ Մակար Ա Թեղուտեցուն 1890 թ. մարտի 28-ին հղած գրությունում դպրոցի բացման և ժողովրդի ընտրությամբ հոգաբարձուների խորհրդի ձևավորման մասին ասվում է. «Ի հետևումն գրութեան Դիւանատան Ձերդ Սրբութեան ի 10 Յունվարի տարւոյս ընդ համարաւ 4, առաջադրութեամբ ի 13 այնր ամսոյ համարաւ 64, պահանջեցի ի Փոխանորդէ նօրին Սիւնեաց զկանոնաւոր ընտրողաթաղի պատգամաւորաց, հոգաբարձուաց և անձնափոխանորդաց նոցին ի կառավարութիւն երկդասեան տղայոց նորոգ բանալի վարժարանին Գօրիսու և ընկալայ ընդ յայտարարութեան նորին ի 21 ամսոյս ընդ համարաւ 24:

Յիշատակեալ ընտրողագիրսն հանդերձ համախօսական վճռագրովք հա-

1 Տե՛ս Գօրիսից, «Նոր-Դար», Թիֆլիս, 1890, փետրուարի 6, N 15:

2 Գեօրիսից, «Նոր-Դար», Թիֆլիս, 1889, հոկտեմբերի 25, N 177:

3 Նույն տեղում:

4 **Յով. Դան.[Հովհաննես Դանիելյան]**, Նամակ Գօրիսից, «Մշակ», Թիֆլիս, 1890, սեպտեմբերի 27, N 110:

5 Երևանի թեմի առաջնորդ համարվում է Ամենայն Հայոց կաթողիկոսը (տե՛ս **Նէրսես վրդ. Մելիք-Թանգեան,** Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 690):

6 Սուքիաս եպս. Պարզյանցը Երևանի թեմի փոխառաջնորդ է կարգվել 1887 հունվարի 3-ին և պաշտոնավարել է մինչև 1890 թ. օգոստոսի 27-ը: Նույն թեմում երկրորդ անգամ փոխառաջնորդ է կարգվել 1899 թ. հոկտեմբերի 26-ից մինչև 1903 թ. սեպտեմբերի 11-ը (տե՛ս **ՀԱՅ**, Սուքիաս արքեպս. Պարզեան, «Հայրենիք», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 14, N 18):

7 Տե՛ս **Գիւտ Ա. Ք. Աղանեանց**, Էջմիածնի համագումար ժողովին, «Հայրենիք», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 20, N 19:

սարակութեանն Գօրիսու վասն ապահով պահպանութեան նորոգ բանալի վարժարանին ընդ այսմիկ մատուցանելով ի բարենկատողութիւն Ձերդ Վեհափառութեան՝ ամենախոնարհաբար խնդրեմ զբարեհաճ տնօրէնութիւն Հոգևոր Տեառնդ վասն տալոյ զիրաման բացման երկդասեան, արականաց դպրոցի ի յիշատակեալ աւանի և հաստատելոյ ի պաշտաման Հոգաբարձութեան զբարեկրօն Խորէն քահանայն Մելիք-Դադայեանց, զերեսփոխան Բաղդասարն Մարգարեան, զպարոնայս Հայրապետ Բաղրեան և Յովհաննես Յարութիւնեան Մըկրտչեանց, իսկ ի պարտաւորութիւն անձնափոխանորդութեան զպարոնայս Խաչատուր Շափաղաթեան և զՄանուչարն Սափեան:

Ձերդ սրբազնասուրբ քահանայապետութեան
շնորհ ունիմ լինել մշտական
ամենախոնարհ ծառայ
Սուքիաս եպիսկոպոս»[1]:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մակար Ա Թեղուտեցու 1890 թ. ապրիլի 6-ի թիվ 154 կոնդակով հիմնադրվում է Սբ. Հռիփսիմե[2] եկեղեցական-ծխական երկդասյա (4-ամյա) արական դպրոցը[3]: Կոնդակում ասվում է. «Կոնդակ Վեհա-

1 Գորիսի երկրագիտական թանգարան: Մ. Մ., N 3216:

2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 157, թ. 1, տե՛ս նաև գ. 16, թ. 37, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1890, ապրիլի 17, N 42: Հայտնի է, որ Հռիփսիմյան և Գայանյան անուններն են կրել Հայաստանում XIX դարում բացված օրիորդաց դպրոցները և գիմնազիաները: Արական դպրոցը Սբ Հռիփսիմեի անունով կոչելը փաստում է այն իրողությունը, որ Սյունիքում, Հայոց սրբերի շարքում, Հռիփսիմե նահատակի հանդեպ եղել է մեծագույն պաշտամունք:

3 Ի դեպ՝ նշենք, որ դպրոցի հիմնադրման հարցին անդրադարձած ուսումնասիրողներից Ս. Հախվերդյանը, վկայակոչելով Հայաստանի ազգային արխիվում պահվող գործերից մեկը (ֆ. 56, ց, 3, գ. 627, թ. 38), գրում է, թե իբր «Գորիս քաղաքի հայկական դպրոցը հիմնադրվել է 1884 թ.՝ ռուսականից շուրջ տասը տարի հետո» (**Հախվերդյան Ս.**, Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, էջ 197): Ըստ Ս. Հախվերդյանի վկայաբերած տեղեկության՝ ստացվում է, որ Գորիսում արքունի դպրոցը հիմնադրվել է 1874 թ.: Մինչդեռ վերը նշված տարաբնույթ սկզբնաղբյուրները փաստում են, որ պետական (արքունի) դպրոցը հիմնադրվել է ոչ թե 1874, այլ՝ 1876 թ.: Ս. Հախվերդյանի մատնանշած փաստաթուղթն ընթերցելու համար, որի իսկությունն ու հավաստիությունը էապես կարող էր նպաստել հարցի պարզաբանմանը, ՀԱԱ-ում նույնպես ուսումնասիրեցինք վերոնշյալ գործը: Սակայն տարակուսելին այն էր, որ 1876 թ. վերաբերող և ընդամենը 11 թերթից բաղկացած «Թիֆլիս քաղաքի բնակիչներ Միրխանամյանցին և Մարիամ Փորխյանցին ամուսնության թույլտվություն տալու մասին» վերտառությամբ գործում իսպառ բացակայում էր որևէ տեղեկություն ոչ միայն հայոց ծխական դպրոցների, այլև ընդհանրապես Գորիսի մասին:

1884 թ. Գորիսում չի գործել ծխական դպրոց, վկայվում է Գորիսից «Նոր-Դարին» հղած թղթակցությունում. «Մինչև այսօր Տաթեւու վիճակի կենդրոնատեղում, այն է Կորիսում մի փոքրիկ ծխական դպրոց չը կայ և նա (Սյունյաց փոխանորդության առաջնորդ Հովհաննես վրդ. Ղալամյանը - Գ. Ս.) այդ մասին բնաւ չէ հոգում» (Կորիսից (Սիւնեաց նահանգ), «Նոր-Դար», Թիֆլիս, 1884, սեպտեմբերի 4, N 140): Ընդգծենք, որ 1884 թ. Գորիսում ծխական դպրոց չէր կարող բացվել հենց միայն այն պատճառով, որ կայսր Ալեքսանդր 3-րդի կողմից 1884 թ. փետրվարի 16-ին «Հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին կանոնների» հաստատումից հետո, երբ ցարական իշխանություններն էլ ավելի խստացրին հայոց դպրոցները պետական հսկողության տակ առնող կարգը, Սինոդի՝ հրահանգը կատարելու մերժման և հայ հասարակության ընդվզման, ուժեղ շարժման ու հակամարտության պայմաններում չէր կարող հիմնվել որևէ նոր դպրոց: Հետևանքը եղավ այն, որ 1885 թ. մարտից Այսրկովկասի, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի մեջ փակվեց մոտ 300 դպրոց (տե՛ս **Քամալեանց Ս.**, Դպրոցները փակելու օրերից, «Լումայ», Թիֆլիս, 1907, N 3-4, էջ 52):

Մեր ուսումնասիրությունները հիմք են տալիս արձանագրելու, որ գավառակենտրոն Գորիսում ծխական երկդասյա արական դպրոցը հիմնադրվել է 1890-1891 թթ. ուսումնական տարում: Այս եզրահանգումը հիմնված է մի շարք փաստերի վրա: Այսպես՝ դպրոցի 1892-1897 թթ. ավագ ուսուցիչ Գեղեոն Տեր-Մինասյանի 1895 թ. սեպտեմբերի 24-ին Երևանի թեմի առաջնորդ Անանիա եպս. Համազասպյանին ուղարկած զեկուցագրում ասվում է. «Գորիսի հայոց եկեղեցական-ծխական դպրոցը գոյութիւն ունի 5 տարուց ի վեր, բացուել է 1890 թուի հոկտեմ-

փառ Հայրապետի Ազգիս ի 6 Ապրիլի թ. 154, որով ընդարձակեցան իրաւունք Փոխ-թեմական՝ Հայոց Երեւանայ բանալ ի Գորիս աւանի եկեղեցական ծխական երկդասեան տղայոց ուսումնարան և հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վասն այնորիկ ուսումնարանին՝ Բարեկրօն Խորէն քահանայն Մելիք Դադայեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և յարգելիք՝ Հայրապետն Բաղրեան և Յովհաննէսն Յարութիւնեան Մկրտչեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց՝ պատուելիք՝ Խաչատուրն Շափաղաթեանց և Մանուչարն Սափեան»[1]:

Հատկանշական է այն հանգամանքը, որ դպրոցի բացման գործին նախանձախնդրորեն ձեռնամուխ էին հատկապես դրսեկները կամ, ինչպես տեղաբնակներն էին նրանց կոչում «օտարական հայերը»[2]: Մերվելով տեղի բնակչութեանը՝ նրանց շարքերում եղած արվեստասերներն իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին գրական-մշակութային միջոցառումների կազմակերպմանը: Բացվելիք դպրոցին նյութապես աջակցելու նպատակով վերջիններիս կողմից կազմված թատերական խումբը 1890 թ. ապրիլի 8-ին ներկայացնում է «Ա՛յ քեզ օյին» (Գ. Երիցփոխյան) և «Կըռթ-Կըռթ» (Վ. Մադաթյան) վոդևիլները և ստացված հասույթն ամբողջովին տրամադրում նորահիմն դպրոցի հոգաբարձական խորհրդին: «Դահլիճը հանդիսականներով լցվել էր: Գոյացած 100 ռուբլու մուտքը վաղօրօք յատկացրած էր Գորիսում բացվելի երկդասեան հայոց ծխական դպրոցի օգտին, որի համար արդէն խնդրագիր է մատուցված վեհափառ Կաթողիկոսին»[3],- գրում է «Մշակը»: Միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել գավառապետ Իվան Սուշևսկի-Ռակուզան (1888 հուլիս-1894)[4], գավառային բժիշկը, հաշտարար դատավորները և պրիստավները: «Նրանք բոլորը,- գրում է «Մշակը»,- շատ լաւ գիտէին, որ այդ ներկայացումը ուրիշ քաղաքներում իրանց տեսածների հետ համեմատելով՝ չնչին բան է, բայց հասկանալով թէ ներկայացման մուտքը յատկացրած է բացվելի ուսումնարանին, չը զլացան իրանց լուման գցելու այդ հանրօգուտ նպատակի համար»[5]: Զարմանալի է, որ շնորհակալ այդ գործի հանդեպ պասիվ դիրք էին բռնել տեղի ունևորները: «Իսկ բուն գորիսեցիները,- գրում է «Մշակը»,- մանաւանդ հարուստները, բացարձակապէս մերժում էին տոմսակ վերցնել, անտես առնելով

բերի 10-ին» (ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 142, թ. 21): 1910-1911 թթ. ուսումնական տարվա՝ «Երևանի թեմի եկեղեցական-ծխական դպրոցների դրամական, ուսուցիչների, աշակերտների, հոգաբարձուների և ծառայողների ընդհանուր տեղեկագրում», «Դպրոցը ո՞ր թուին է հիմնուել և ո՞ր թուին վերաբացուել» հարցը պարունակող սյունակում Գորիսի դպրոցի հիմնադրման տարեթիվ է նշված 1890 թ. (տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 157, թ. 1): «Գաւառ» շաբաթաթերթի 1910 թ. հունվարի 17-ի համարի լրատվության բաժնում պահպանված մի ուշարժան տեղեկության մեջ ասվում է. «Այս տարի լրանում է ծխական դպրոցի 20-ամեակը: Այդ առթիւ հաստատապէս իմացանք, որ աւագ-ուսուցիչ պ. Սիմ. Տէր-Մինասեանը մօտ օրերումս հասարակութեան առաջաւորների մասնակցութեամբ խառն ժողով պիտի գումարի որոշելու այդ յօբելեանը հանդիսաւոր տօնելու համար» («Գաւառ», Գորիս, 1910, յունուարի 17, N 3): Իսկ նույն դպրոցի երկարամյա ուսուցիչ Տ. Սազանդարյանը Շուշիում հրատարակվող «Ղարաբաղ» լրագրին տված թղթակցությունում սրբագրում է. «Հայոց եկեղեցական ծխական դպրոցը, որ գոյութիւն ունի 1890 թ.» (**Սազանդարեան** [**Տ**.], Գորիս (համառոտակի ուսումնասիրութիւն), «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունուարի 29, N 8):

1 Պաշտօնականք: Քաղուածք կոնդակաց Վեհափառ Հայրապետի ազգիս, «Արարատ», Վաղարշապատ, 1890, N Ե, էջ 284-285:

2 «Մշակ», Թիֆլիս, 1890, ապրիլի 17, N 42:

3 Նույն տեղում:

4 Տե՛ս КК на 1889 г., Тифлис, 1888, с. 148, տե՛ս նաև КК на 1895 г., Тифлис, 1894, с. 140.

5 «Մշակ», Թիֆլիս, 1890, ապրիլի 17, N 42:

այն գովելի նպատակը, որի համար տրվում էր ներկայացումը՝ ուսումնարանի հիմնարկութիւնը»[1]: Դպրոցի հոգաբարձուներն էին Խորեն քհն. Մելիք-Դադայանը (նախագահ), երեսփոխան Բաղդասար Մարգարյանը, Հայրապետ Բաղրյանը և Հովհաննես Մկրտչյանցը (գանձապահ): Անձնափոխանորդներն էին Խաչատուր Շափաղաթյանը և Մանուչար Սափյանը[2]: Դպրոցի առաջին ավագ ուսուցչի պաշտոնը 1890-1893 թթ. վարել է ճեմարանավարտ Ռաֆայել Տեր-Ավագյանը (Աբրահամյան)[3]: Դպրոցում դասավանդվել է կրոն, հայոց լեզու, թվաբանություն, հայրենագիտություն, հայոց պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, բնական գիտություն, նկարչություն, վայելչագրություն և երգեցողություն[4]: Հայոց և ռուսաց լեզուների առաջին ուսուցիչն էր Խ. Փիրջանյանցը[5]: Հոգաբարձական խորհրդի որոշմամբ՝ հայոց լեզվի ուսուցիչ է հրավիրվում նաև ճեմարանավարտ Գ. Տեր-Հովհաննիսյանցը[6]:

Եկեղեցական-ծխական դպրոցի հանդիսավոր բացումը բազմաթիվ ներկաների, գավառապետի ու հաշտարար դատավորի մասնակցությամբ տեղի ունեցավ 1890 թ. սեպտեմբերի 17-ին: Քահանաների օրհնանքից և ծխական քահանա Խորեն Մելիք-Դադայանի ելույթից հետո թարգմանի միջոցով ողջույնի խոսք է ասում նաև գավառապետը՝ նշելով. «...վաղուց է ես լսել եմ, որ գօրիսեցիները մտադիր են ուսումնարան բանալու և այսօր բաղդ եմ ունենում տեսնել մի այդպիսի յառաջադիմութիւն...»[7]:

Տարբեր տարիներին դպրոցում արգասավոր մանկավարժական գործունեություն են ծավալել ժամանակի ճանաչված մանկավարժներ Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը (ավարտել է Գևորգյան ճեմարանը), Աբրահամ Բաբայանը, Հասմիկ Մալխասյանը, Սամսոն Դավթյանը (ավարտել է Գևորգյան ճեմարանը), Աբրահամ Բարսեղյանը, Համբարձում Տեր-Ղազարյանը (ավարտել է Ալեքսանդրապոլի արական գիմնազիան), Կատարինե Սարոյանցը (ավարտել է Ալեքսանդրապոլի Արղության օրիորդաց դպրոցը), Հովհաննես Գրիգորյանը, Շուշեցի Առաքել քհն. Յուզբաշյանը[8] և ուրիշներ[9]:

1 Նույն տեղում:

2 Գորիսի երկրագիտական թանգարան: Մ. Մ., N 3216, տե՛ս նաև Կորիսից (Զանգեզուրի գաւառ), «Նոր-Դար», Թիֆլիս, 1891, յունիսի 15, N 100:

3 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 89, թ. 10, տե՛ս նաև գ. 90, թ. 11, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1893, յուլիսի 21, N 83: Ռաֆայել Տեր-Ավագյանը (Աբրահամյան: 1867-՞ թթ.) ծագումով պարսկահայ է: Նախապապը, որ ծնվել է Պարսկահայքի Սալմաստ գավառի Սավրա գյուղում, 1828 թ. ներգաղթել է Վայոց Ձոր՝ Դարալագյազ և հաստատվել Բաշքենդ գյուղում: Այստեղ է ծնվել Ռաֆայելի հայրը՝ Ավագ քհն. Աբրահամյանը, ով քահանայագործել է Բաշքենդ, Մալիշկա, այնուհետև՝ Վայոց Ձորի հոգևոր կենտրոն Արկյազի Սուրբ Խաչ վանքում: Ավագ քհն. Աբրահամյանն ունեցել է չորս որդի (Գրիգոր, Գաբրիել, Միքայել, Ռաֆայել), որոնք աչքի ընկնող դեր են կատարել Վայոց Ձորի կրթալուսավորական բնագավառում: Ռաֆայելը նախ ուսուցչություն է արել Գորիսում, ապա՝ Բաքվում և Հյուսիսային Կովկասի հայաշատ քաղաքներում: Եղել է 1921 թ. Փետրվարյան ապստամբությունից հետո «Հայրենիքի փրկության կոմիտեի» կողմից Վայոց Ձոր գործուղված հատուկ հանձնաժողովի անդամ (տե՛ս Ռուբէն Աբրահամեան: Խմբագիր եւ կազմող՝ **Սիմոնեան Ա**., Երեւան, 2013, էջ 14, 18):

4 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 48, g. 1, գ. 451, թ. 23:

5 Տե՛ս **Յով. Դան**. [**Հովհաննես Դանիելյան**], Նամակ Գօրիսից, «Մշակ», Թիֆլիս, 1890, սեպտեմբերի 27, N 110, տե՛ս նաև «Նոր-Դար», Թիֆլիս, 1891, յունիսի 15, N 100:

6 Տե՛ս *** [**Գրիգոր Գրիգորյան**], Նամակ Գօրիսից, «Մշակ», 1890, օգոստոսի 4, N 87):

7 **Յով. Դան. [Հովհաննես Դանիելյան]**, Նամակ Գօրիսից, «Մշակ», Թիֆլիս, 1890, սեպտեմբերի 27, N 110:

8 Առաքելը նախքան այդ 1840-1860-ական թթ. եղել է Արցախի կոնսիստորիայի անդամ, հետագայում քահանայագործել է Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 4221, g. 4, գ. 492, թ. 20, տե՛ս նաև **Յուզբաշյան Հ**., Ես ապրել եմ Շուշիում, Երևան, 2017, էջ 10):

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 89, թ. 10-ի շրջերես, տե՛ս նաև ֆ. 7, g. 1, գ. 90, թ. 11, տե՛ս նաև ֆ. 7, g. 1, գ. 142, թ. 21:

Հարուստ և հետաքրքիր պատմություն ունի Սբ Հռիփսիմե ծխական դպրոցը: Հիմնադրումից ի վեր՝ դպրոցը նվիրվել է բացառապես ազգօգուտ գործունեության՝ կրթելով ու դաստիարակելով բազմաթիվ երեխաների: Սակայն արևելահայ մյուս դպրոցների պես, այս դպրոցը ևս, խոչընդոտներով լեցուն ուղի է անցել: Դա պայմանավորված էր ոչ միայն դպրոցը նյութական անհրաժեշտ միջոցներով և ուսուցչական մշտական խմբերով ապահովելու խնդրով, այլև ինքնակալության կողմից դեռևս XIX դարի երկրորդ կեսից սկսված ուծացման քաղաքականության հարուցած դժվարությունները հաղթահարելով: Ցարական իշխանությունները, հենց սկզբից արտոնյալ պայմաններ ստեղծելով արքունի դպրոցների համար, պայքարեցին հայ եկեղեցու դեմ՝ աշխարհականների զավակներին արգելելով հաճախել հոգևոր-ազգային դպրոցներ[1]:

Դպրոցը չուներ սեփական շենք, ինչի պատճառով դասերն անցկացվել են վարձու մասնավոր շինությունում: 1890-1891 թթ. ուսումնական տարում դպրոցն ուներ 60 աշակերտ[2]: Երկու տարի անց՝ 1892-1893 թթ. ուսումնական տարվանից, նոր միայն հաճախել են փոքրաթիվ աշակերտուհիներ[3]: Նկատենք, որ ինչպես Հայաստանի այլ վայրերում, Զանգեզուրի գավառում ևս դեռևս շատ ուժեղ էին նախապաշարումները, ուստի աղջիկների կրթության գործում ձեռք բերվածը լուրջ առաջընթաց էր:

Ուսումնական տարին ավարտվում էր ծխականների ներկայությամբ տրվող հաշվետվությամբ: Առաջին հաշվետվությունը ներկայացրել է Խ. Փիրջանյանցը, որն առաջադեմ աշակերտներին բաժանել է գրքույկներ: Նա, իր ելույթում մատնանշելով դպրոցի առջև ծառացած խնդիրները, «...խրախուսեց ժողովրդին հոգալ եկող տարուայ երկրորդ դասատուն բացելու պատճառով վարձել մի ընդարձակ շինութիւն, որ համապատասխան լինի մանկավարժական պահանջներին»[4]:

Հիշարժան են հատկապես դպրոցի աշակերտության ուժերով կազմակերպած տարեվերջյան տոնական հանդեսները, որոնց սովորաբար ներկա էին լինում սովորողների ծնողները և հոգաբարձուները: Ինչպես, օրինակ, 1893 թ. հուլիսի վերջին՝ Ռաֆայել Տեր-Ավագյանի տարեկան հաշվետվությունից հետո, «...աշակերտներից կազմած երգեցիկ խումբը երգեց քանի մի ազգային երգեր և մէջ ընդ մէջ էլ աշակերտները անգիր կարդացին զանազան ոտանաւորներ Գամառ-Քաթիպայից, որոնք խորը ազդեցին ժողովրդի վրայ»[5]: Վերջում, հանդեսին ներկա ուսանող Տ. Բեկզադյանի[6] առաջարկությամբ՝ դպրոցի օգտին հանգանակվում է 50 ռ. և հանձնվում հոգաբարձությանը[7]:

1 Տե՛ս **Երկանյան Վ.**, Հայկական դպրոցը 1800-1870 թթ., ԼՀԳ, Երևան, 1970, N 10, էջ 34:

2 Տե՛ս Կորիսից (Զանգեզուրի գաւառ), «Նոր-Դար», Թիֆլիս, 1891, յունիսի 15, N 100:

3 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 142, թ. 31:

4 Կորիսից (Զանգեզուրի գաւառ), «Նոր-Դար», Թիֆլիս, 1891, յունիսի 15, N 100:

5 «Արձագանք», Թիֆլիս, 1893, յուլիսի 21, N 83:

6 Ձեռքի տակ չունենալով ստույգ տեղեկություններ, այդուհանդերձ, կարծում ենք, որ խոսքն այստեղ հետագայում ճանաչված հասարակական-պետական գործիչ Տիգրան Հարությունի Բեկզադյանի (1871թ. Շուշի-08.08.-1942 թ. Փարիզ) մասին է: Հարություն Բեկզադյանը Շուշիից Բաքու էր տեղափոխվել 1901 թ.: Բեկզադյանները եղել են յոթ եղբայրներ՝ անդամագրված տարբեր կուսակցությունների: Նրանցից Ալեքսանդրը բոլշևիկ էր, Տիգրանը հարում էր ՀՅԴ-ին, Հովսեփը և Պետրոսը սոցիալիստ-հեղափոխականներ էին, Ռուբենը՝ միապետական: Քաղաքական գործունեությամբ չեն զբաղվել Արամն ու Գուրգենը (տե՛ս **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա, Երևան, 2003, էջ 82-83):

7 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1893, յուլիսի 21, N 83:

Ավագ ուսուցչի պաշտոնում Ռաֆայել Տեր-Ավագյանին փոխարինել է դպրոցական գործի հմուտ կազմակերպիչ, ճեմարանավարտ Գեդեոն Տեր-Մինասյանը (1893-1897 թթ.)[1]:

1894 թ. դեկտեմբերի 3-ին դպրոցի դահլիճում կազմակերպվում է սբ. Թադևոս և սբ Բարդուղիմեոս առաքյալների հիշատակին նվիրված հանդես: Ծնողներից բացի՝ միջոցառմանը ներկա էին գյուղաքաղաքի երևելիները. «Հանդիսականների մէջ նկատելի էր հայ կանանց և օրիորդների ներկայութիւնը: Մինչև անգամ նկատելի էր տեղական տարազով մի կին: Դա ուրախալի երևոյթ է, որովհետև դեռ երէկ հայ կինը, հայ օրիորդը ամօթ էր համարում երևան գալ այդպիսի հանդէսներում, իսկ այսօր միանգամայն ոտքի տակ տալով նախապաշարմունքը, նա վստահաբար իր ամուսնու հետ միասին գնում է դպրոցական հանդէսներին ներկայ լինելու»[2]: Միջոցառմանը հոգևոր երգերի կատարումներով հանդես եկավ դպրոցի աշակերտներից և աշակերտուհիներից բաղկացած երգեցիկ խումբը: Եղան նաև անհատ կատարումներ: Ներկաների վրա հատկապես մեծ ներգործություն ունեցավ մի աշակերտուհու կատարմամբ հնչած «Գիշերը Վանում» երգը, որն «...այնքան դուրեկան էր, որ նոյն իսկ Գօրիսի խօջաներից մի քանիսի քարացած զգացմունքների վրա էլ ազդեց»[3]:

Նշենք, որ դպրոցի արդյունավետ գործունեությանը զուգընթաց՝ 1895 թ. օգոստոսի դրությամբ դեռևս չէր լուծվել սեփական շինություն ունենալու հարցը: Գորիսից «Մշակին» հղած թղթակցությունում Հովհաննես Դանիելյանն այդ առիթով գրում է. «Նոր Գօրիսը սեփական եկեղեցի և դպրոցի շէնք չունի. յոյս ունենք, որ կաթողիկոսը (Խրիմյան Հայրիկը - Գ. Ս.) Գօրիսը այցելելով՝ ոչինչ կարգադրութիւն չի խնայի այդ երկու հիմնարկութիւնների գործը աջողեցնելու համար»[4]: Դպրոցն իր բեղմնավոր գործունեությունը շարունակեց մինչև 1896 թ. կեսերը և փակվեց հայկական դպրոցների դեմ ցարական իշխանությունների վերսկսած հալածական քաղաքականության հետևանքով[5]:

1 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 89, թ. 10, տե՛ս նաև գ. 90, թ. 11, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1893, յուլիսի 21, N 83, տե՛ս նաև գ. 142, թ. 21, տե՛ս նաև ֆ. 312, g. 2, գ. 1263, թ. 19-20: Գեդեոն Տեր-Մինասյանը ծնվել է Կապանի Խլաթաղ գյուղում՝ քահանայի ընտանիքում: 1880 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի Զ դասարանը: Ուսուցչություն է արել նախ Շուշիի թեմական, Մարիամյան, Նուխիի երկսեռ ծխական դպրոցներում (եղել է Նուխիի «Կովկասի Հայոց բարեգործական ընկերության» մասնաճյուղի վարչության անդամ, տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 10, N 220), 1893-1897, ապա 1905-1906 թթ. եղել է Գորիսի Սբ Հռիփսիմե ծխական դպրոցի ավագ ուսուցիչը: Այդտեղից մանկավարժական գործունեությունը շարունակել է Շրվենանց գյուղում՝ որպես ավագ ուսուցիչ (տե՛ս **Տեր-Մինասեան Գ.**, Համառոտ տեղեկագիր Շրվենանց գիւղի հայոց եկ.-ծիս. երկդասեան-երկսեռ «Գ. Յ. Տէր-Մարգարեան» դպրոցի 1914/1915 ուս. տ., «Փայլակ», Շուշի, 1915, յուլիսի 23, N 39): Անդամակցել է ՀՅԴ կուսակցությանը: 1918-1921 թթ. Զանգեզուրի համար ստեղծված ռազմաքաղաքական ծանր կացության ժամանակ զբաղվել է հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ: Զինակցել է Անդրանիկին, Արսեն Շահմազյանին, այնուհետև՝ Գարեգին Նժդեհին: Զգալի ավանդ ունի թուրք-մուսավաթական հարձակումներից երկրամասի պաշտպանության գործում: Եղել է Ինքնավար Սյունիքի Սահմանադիր Ժողովի նախագահ, Լեռնահայաստանի կառավարությունում զբաղեցրել է պետական վերահսկիչի պաշտոնը: 1921 թ. տարագրվել է Իրան: 1937 թ. վերադարձել է Հայաստան: Նույն թվականի նոյեմբերին ձերբակալվել է, իսկ դեկտեմբերի 17-ին՝ գնդակահարվել (տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 142, թ. 21, տե՛ս նաև **Սմբատյան Գ.**, Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, 2009, էջ 145):

2 **Յ. Դ. [Հովհաննես Դանիելյան]**, Նամակ Գորիսից, «Մշակ», Թիֆլիս, 1894, դեկտեմբերի 15, N 145:

3 Նույն տեղում:

4 **Յ. Դ. [Հովհաննես Դանիելյան]**, Նամակ Գորիսից, «Մշակ», Թիֆլիս, 1895, օգոստոսի 29, N 98:

5 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 153, թ. 5, տե՛ս նաև **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 119:

Դպրոցը վերաբացվել է միայն 1905 թ. օգոստոսի 1-ին որպես միդասյան արական դպրոց: Սակայն դպրոցը չուներ սեփական շինություն: Վերաբացված դպրոցի պարապմունքները տակավին անցկացվում էին Գորիսի բազմարդյուն ու անվանի մարդկանցից մեկի՝ 1907 թ.-ից դպրոցի հոգաբարձների խորհրդի անդամ[1] Առաքել Տեր-Մովսիսյանի[2] ժամանակավորապես տրամադրած «Պոդ-գորնի» փողոցի[3] վրա գտնվող երկհարկ սեփական տան հինգ սենյակները[4]: Դպրոցում 1905-1908 թթ. ուսանած Վաղարշակ Հովակիմյանը 1961 թ. սեպտեմբերի 26-ին գրառած «Հուշեր Ակսել Բակունցից» վերտառությամբ հուշ-ակնարկում, որ վառ հիշողություններ է թողել գրողի մասին, այդ մասին վկայում է. «1905 թ. օգոստոսն էր, անտառից փայտը շալակիս դեռ նոր էի վերադարձել տուն, երբ հորեղբորս որդիներից մեկը հևիհև ներս ընկավ մեր բակը և ինձ ասաց. «Շու՛տ արա, վազիր քաղաք, ղափանցի Առաքելի տանը բացվել է հայոց ըշկոլ, բոլորին էլ ընդունում են...»: Այդ ատեն ես 11 տարեկան էի: Չանցած 5-10 րոպե, ես արդեն կանգնած էի հայոց դպրոցի երկհարկանի քարակոփ շենքի գավթում հավաքված երկսեռ բազմության մեջ: Նրանք բոլորն էլ ուրախ էին և զվարթ: Նրանցից յուրաքանչյուրը բռնած իրենց երեխաների ձեռքերից՝ սրտատրոփ հերթի էին սպասում. որոշվում էր իրենց զավակների բախտը: Գավթում հավաքված բազմության մեջ, ի շարս այլոց, իմ տեսադաշտից չվրիպեց նաև տարիքով ամենից փոքր Թևոսյան Ալեքսանդրը (Ակսել Բակունցը - Գ. Ս.), որ ճտիկի պես բռնել էր իր հոր՝ Ստեփան ամու չուխայի փեշից և ուրիշների պես հերթի էր սպասում ցուցակագրվելու Գեդեոն վարժապետի (դպրոցի ավագ ուսուցիչ Գեդեոն Տեր-Մինասյանի - Գ. Ս.) մատյանում»[5]:

Զանգեզուրի գավառի ծխական դպրոցներում, այդ թվում նաև Գորիսի դպրոցում, նյութական խնդիրներից զատ, առկա էին նաև ուսումնակրթական լուրջ բացթողումներ: Գորիսի դպրոցի ուսուցիչ, գավառահայության լուսավորության շարժման գործունյա մասնակից Տ. Սազանդարյանը, Թիֆլիսում լույս տեսնող «Արօր» թերթի 1907 թ-ի № 8-ում հրատարակած «Դպրոցները Զանգեզուրում» վերտառությամբ հոդվածում բարձրաձայնելով դպրոցի անմխիթար վիճակի մասին, գրում է. «Զանգեզուրում կան 75 հայ գիւղեր, բայց դպրոց՝ այն էլ եթէ իր մի շարք անյարմարութիւնները, հազար ու մի պակասութիւնները մոռանալու լինենք, Գօրիսը միայն ունի: Եւ ի՞նչ դպրոց է դա: Կատարեալ բաբե-

1 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 155, թ. 17, տե՛ս նաև ֆ. 56, ց. 15, գ. 544, թ. 11:

2 Առաքել Տեր-Մովսիսյանը զբաղվել է առևտրով և Գորիսում ունեցել է խանութ (տե՛ս Գեօրեսից, «Նոր-Դար», Թիֆլիս, 1889, սեպտեմբերի 26, N 158):

3 Տե՛ս **Ա. Զանգեզուրցի** [**Արտեմ Խանզադյան**], Դաշնակցութեան մուտքն ու աշխատանքը Զանգեզուրում (Կազմակերպիչ ընկերները ինչպիսի վախճանի արժանացան), «Ալիք», Թեհրան, 1979, յունիսի 3, N 113, էջ 6:

4 Տե՛ս Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, էջ 9-10, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ, 156, թ. 31-շրջերես: Ա. Բակունցի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու նպատակով 1959-1960 թթ. Գորիս այցելած բ.գ.դ, պրոֆ. Ռաֆայել Իշխանյանը գրում է, որ Առաքել Տեր-Մովսիսյանի տունը գտնվում էր Շահումյան փողոցի թիվ N 17 հասցեում և այն բնակելի էր (տե՛ս **Իշխանյան Ռ.**, Ակսել Բակունցի կյանքն ու արվեստը, Երևան, 1974, էջ 13): Կոփածո քարերով շենքի ներկայիս հասցեն է՝ Կոմիտասի փ. N 15: 2017 թ. մայիսի 2-ին՝ Գորիս հերթական այցելության ժամանակ, Առաքել Տեր-Մովսիսյանի քրոջ՝ Սանամի թոռ Գագիկ Գրիգորյանը մեզ տեղեկացրեց, որ շենքի սկզբնամասի հատվածը, որտեղ եղել է գեղեցիկ պատշգամբ, քանդվել է 1950-ական թվականների կեսերին, իսկ տեղում կառուցվել է եռահարկ բազմաբնակարան շինություն:

5 Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում: Կազմողներ՝ **Ն. Հովսեփյան**, **Ջ. Թունյան**, **Ք. Միքայելյան**, Երևան, 1999, էջ 9-10:

լոնեան խառնակ դրութիւնից վերցրած մի տեսարան է նա ներկայացնում, իր զանազան «մասսաբի» ծառայող հոգաբարձուներով, որոնք դպրոցից այնքան հեռու են, որքան Ա-Ֆ-ից: Այդ դեռ գաւառական քաղաքի դպրոցն է. ապա անցէք գիւղերը, որպիսի ամայութիւն կը բացւի ձեր դիմաց...»[1]: Հոդվածագիրը դպրոցի անմխիթար վիճակի համար առաջին հերթին ամբաստանում էր քաղաքի հարուստ և ունևոր դասակարգին, որն «...իրենց որդոց ուղարկում են քաղաքներ, իսկ գաւառում մանուկների կրթութեան սկզբնական ուսման ընդհանրացման մասին չեն հոգում»[2]:

Դպրոցի գործունեությունը որոշակի կանոնակարգված հիմքերի վրա դրվեց, երբ ավագ ուսուցչի պաշտոնը ստանձնեց ծնունդով գորիսեցի, XX դարասկզբի բազմաշնորհ ու լուսամիտ գործիչներից մանկավարժ, հրատարակիչ-խմբագիր և հրապարակախոս Սիմեոն Տեր-Մինասյանը, որը, 1907 թ. «յոյժ գովելի վարքով» ավարտելով Գևորգյան հոգևոր ճեմարանի դպրոցական բաժինը, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ էր աշխատում նախ՝ Վաղարշապատի, ապա՝ 1908 թ. սեպտեմբերից Վերին Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ) ծխական դպրոցներում[3]: Ս. Տեր-Մինասյանը, հավատարիմ իր պարտքին, ընդունում է Գորիսի Սբ. Հռիփսիմե ծխական դպրոցի հոգաբարձական խորհրդի հրավերն ու թեմական խորհրդի որոշումը և գրական ու կրթական ծրագրերի ապագա հղացումների պաշարով ավագ ուսուցչի պաշտոնով 1909 թ. ամռան սկզբներին տեղափոխվում ծննդավայր, այդ պաշտոնով փոխարինելով Ներսես Տեր-Գրիգորյանին[4]:

Ս. Տեր-Մինասյանը ավագ ուսուցչի պատասխանատու պաշտոն ստանձնեց այն ժամանակ, երբ գավառակենտրոն Գորիսում հասարակական կյանքը առաջ էր ընթանում դանդաղ քայլերով: Տիրում էր հեղձուկ միջավայր, սոցիալական անարդարությունների պատճառով ժողովուրդն ապրում էր ծանր կենսապայմաններում: Անմխիթար վիճակում էր գտնվում հատկապես դպրոցական գործը: «Լևոն Սյունեցի» ստորագրությամբ հեղինակը ահազանգում էր. «...ցաւոք սրտի պէտք է արձանագրեմ, որ մեր քաղաքի գեղեցկութեան մէջ ցցւած է մեր կրթական հաստատութիւնների անմխիթար պատկերը, շնորհիւ հասարակութեան որոշ խաւերի անտարբերութեան: Այժմ քաղաքում գոյութիւն ունի երկու դպրոց՝ մեկը՝ պետական՝ մի զուգընթաց բաժանմունքով, ուր սովորում են մօտ 180 աշակերտներ, միւսը՝ ծխական երկդասեան, որտեղ սովորում են մօտ 200 աշակերտ-աշակերտուհիներ: Ուս. տարւայ սկզբին այս վերջինի գլխին՝ դամոկլեան սրի պես կախւել էր փակման վտանգը »[5]: Նյութական միջոցների բացակայության պատճառով Սբ Հռիփսիմեի եկեղեցական-ծխական հնգամյա դպրոցը 1909 թ. օգոստոսից կարճ ժամանակով դադարեցրել էր գործունեությունը: Բացի այդ՝ նյութական բավարար միջոցների բացակայության պատճառով վտանգվել էր դպրոցի 1909-1910 թթ. ուսումնական տար-

1 **Սազանդարեան** [**Տ.**], Դպրոցները Զանգեզուրում, «Արօր», Թիֆլիս, 1907, սեպտեմբերի 12, N 8:

2 Նույն տեղում:

3 Տե՛ս **Բէկ**, Սիմէօն Տէր-Մինասեան, «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունիսի 28, N 46, տե՛ս նաև **Տէր-Մինասեան Ս.**, Բաց նամակ Վաղարշապատի հասարակութեանը,«Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 17, N 31, տե՛ս նաև **Տէր-Յարութիւնեանց Յով.**, Կենդրոնական դպրոցի խնդիրը: Ղամարլու, 13 օգոստոսի, «Հորիզոն», Թիֆլիս, 1909, օգոստոսի 23, N 18:

4 Տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 31, N 43:

5 **Սիւնեցի Լևոն [Լևոն Միքայելյան]**, Գորիս, «Հորիզոն», Թիֆլիս, 1910, փետրուարի 19, N 39:

վա գործունեությունը[1]: Պատճառը՝ ուսուցիչների մեծ մասի նախորդ տարվանից չվճարված աշխատավարձերն էին, երբ վերջիններս այդ հարցով ընդհուպ դիմել էին դատարան, իսկ ոմանք՝ հեռացել Գորիսից[2]: Դպրոցի փակմանն էր նպաստել նաև քաղաքում տարածված քութեշ հիվանդությունը, որի պատճառով «...հոգաբարձութիւնը, ծխականների որոշմամբ, արձակել է սաներին մինչև հիւանդութեան դադարումը»[3]: Գորիսից Լևոն Սյունեցին «Գործ» օրաթերթին հղած թղթակցությունում վկայում էր. «Երկու ամսից աւել է ինչ քութեշ հիւանդութիւնը տարածւած է Գօրիսում: Փոխանակ օր ըստ օրէ առաջն առնելու միջոցներ ձեռք առնելու, մեզ մօտ այդ հիւանդութիւնը քանի գնում, այնքան ծաւալւում է»[4]:

Գիտակցելով իր ձեռնարկած գործի կարևորությունը հարազատ քաղաքի, ինչպես նաև գավառի ու նրա բնակչության համար՝ Ս. Տեր-Մինասյանը հասարակական եռանդուն գործունեություն սկսեց գաղափարակից մտավորականներին գործի ասպարեզ ներքաշելու հետևյալ կոչով. «**Ընկերնե՛ր, ծանր են պայմանները, քնած է ժողովուրդը, մեզ ոչ ոք չի հասկանում: Աշխատենք միասին, անենք կարելին և այսպիսով ազատ ու հանգիստ լինենք մեր բարոյականի ու խղճի առաջ**»[5]:

Փորձառու Ս. Տեր-Մինասյանի մանկավարժական կարողությունները լայնորեն դրսևորվում են առաջին իսկ տարում: Նրա պաշտոնավարման շրջանը համընկնում է դպրոցական գործի աշխուժացման ու վերելքի ժամանակներին: Ծանոթանալով դպրոցի ընդհանուր վիճակին՝ Ս. Տեր-Մինասյանը եռանդալից մղվեց դպրոցի գործունեության վերսկսման, կրթական գործի բարելավման ու զարգացման գործին: Նրա տևական անդուլ ջանքերի շնորհիվ 1909 թ. սեպտեմբերին վերսկսվում է ծխական դպրոցի գործունեությունը: Դրանում նրան մեծապես աջակցեցին դեռևս 1907 թ. հոգաբարձուներ ընտրված Սերգեյ Տեր-Մինասյանը (նախագահ), Գալուստ Յոլյանը, Պետրոս Տեր-Հարությունյանը և Առաքել Տեր-Մովսիսյանը[6]: Վերաբացվելուց հետո դպրոցի բյուջեն կազմում էր 2790 ռ[7]: Ուսման տարեկան վարձը կազմում էր 1 ռ.[8]: 1909 թ. սեպտեմբերից դպրոցում դասավանդում էին Ս. Տեր-Մինասյանը, Տ. Սազանդարյանը, Լիզա Տիգրանյանը (ավարտել է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիայի VII դասարանը) և Արմենակ Ղարագյոզյանը (ավարտել է Շուշիի ռեալական ուսումնարանը)[9]: Կարճ ժամանակ անց՝ դպրոցն արդեն աչքի էր ընկնում իր կարգապահությամբ և կազմակերպվածությամբ:

1 Տե՛ս **Վ. Հ.** [**Սիմեոն Տեր-Մինասյան**], Մեր իրականութիւնից (I), «Հորիզոն», Թիֆլիս, 1909, օգոստոսի 28, N 22:

2 Տե՛ս **Lorentio D.**, Գօրիս, մայիսի 27, «Գործ», Թիֆլիս, 1909, յունիսի 9, N 120, տե՛ս նաև **Վ. Հ.** [**Սիմեոն Տեր-Մինասյան**], Մեր իրականութիւնից (I), «Հորիզոն», Թիֆլիս, 1909, օգոստոսի 28, N 22:

3 **Ե.**, Գօրիս, 13 ապրիլի, «Գործ», Թիֆլիս, 1909, ապրիլի 21, N 81:

4 **Սիւնեցի Լևոն [Լևոն Միքայելյան]**, Գօրիս, 26 մայիսի, «Գործ», Թիֆլիս, 1909, յունիսի 11, N 122:

5 «Գաւառի ձայն», Ալէքսանդրապոլ, 1914, ապրիլի 24, N 37:

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 155, թ. 17, տե՛ս նաև ֆ. 56, g. 15, գ. 544, թ. 11:

7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 155, թ. 17:

8 Տե՛ս **Ա. Զանգեզուրցի** [**Արտեմ Խանզադյան**], Դաշնակցութեան մուտքն ու աշխատանքը Զանգեզուրում (Կազմակերպիչ ընկերները ինչպիսի վախճանի արժանացան), «Ալիք», Թեհրան, 1979, մայիսի 23, N 105, էջ 5:

9 Տե՛ս նույն տեղում:

Մանկավարժական նոր հայացքներով տոգորված Ս. Տեր-Մինասյանը որակական մի շարք փոփոխություններ կատարեց ուսումնական-կրթական կյանքում: Նա հետամուտ էր ստեղծել կրթական մի համակարգ, որի հիմքում կդրվեին հոգևոր ու ազգային ուսուցման ուղղությունները: Նա հնարավորինս փորձեց կանոնավորել դպրոցական գործը, լուծել առանցքային խնդիրներ. շենքային պայմանների ապահովում, ուսուցիչների մշտական խմբերի պահպանում, աշխատավարձերի ժամանակին տրամադրում, նյութական դրության բարելավում, դպրոցի տարեկան նախահաշիվների կարգավորում և ճիշտ ֆինանսավորում, մանկավարժական խորհրդի դերի բարձրացում, դպրոցում կարգ ու կանոնի պահպանում, աշակերտների մտավոր ու ֆիզիկական դաստիարակության զուգակցում, աշակերտների համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռքբերում և այլն[1]:

Հիշարժան է, որ 1905-1910 թթ. ծխական դպրոցում իր նախակրթությունն է ստացել XX դ. հայ արձակի մեծանուն դեմքերից մեկը՝ Ալեքսանդր Ստեփանի Թևոսյան-Բակունցը[2]: Նրա ավարտական վկայականից տեղեկացվում է, որ դպրոցում ուսուցանվել են հետևյալ առարկանները՝ կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, բնագիտության պատմություն, հայոց պատմություն, ռուսաց պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, ռուսաց աշխարհագրություն, երգեցողություն, երկրաչափություն-ձևագիտություն, գծագրություն-նկարչություն, գեղագրություն և ձեռագործ[3]:

Դպրոցական օրերի տպավորություններն Ա. Բակունցը հետագայում գեղարվեստական պատկերներով նկարագրել է «Բրուտի տղան» գեղեցիկ պատմվածքում:

«Դասարանում... Ծիրանի ծառը ստվեր է գցել տետրակիս վրա: Արևի շողը փայլփլում է մատիտի ծայրին և արտացոլում եղունգիս վրա: Մեկը բոթում է թևս.

– Մեծատառ Շ-ն ո՞նց է:

– Է՛...

– Մի շվի կտամ:

– Այ, տե՛ս,– և ցույց եմ տալիս:

– Վերջին նստարան, լռությո՛ւն,– սաստում է ամբիոնին կռթնած ուսուցիչը: Ճռռում են կոշիկները: Մենք թեպետ վայելչագրության տետրակի վրա գլխահակ ենք, բայց գիտենք, որ նա դեպի մեզ է գալիս: ...

– Վազի՛ր, զանգը տուր,– և օրապահը թռնում է տեղից:

Սկսվում է ամենից զվարթ և աղմկալի երկու րոպեն, մինչև զանգը հնչի և վազենք բակը: Բոթում ենք իրար, կսմթում, մի խոսքով, ելք է ստանում հոգնությունից և ակամա լռությունից զսպված մեր մանկության զվարթությունը»[4]:

Նկատենք, որ նյութական միջոցների սղության պատճառով ծխական դպրոցի աշակերտներն իրենց հագուստներով խիստ տարբերվել են պետա-

1 Տե՛ս **Տեր-Մինասեան Ս.**, Ուսուցչի խոհերից, «Նոր դպրոց», Թիֆլիս, 1910, հոկտեմբեր, N10, էջ 56-64:

2 Ակսել Բակունցի տուն-թանգարան, գիտաօժանդակ ֆոնդ, փաստաթուղթ N 402, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 312, ց. 2, գ. 246, թ. 4:

3 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 312, ց. 2, գ. 246, թ. 4, տե՛ս նաև Ակսել Բակունցի տուն-թանգարան, գիտաօժանդակ ֆոնդ, փաստաթուղթ N 402:

4 **Բակունց Ա.,** Բրուտի տղան, Ընտրանի, Երևան, 2009, էջ 154**:**

կան դպրոցում սովորողներից: Ի տարբերություն այդ դպրոցի՝ հայկական դպրոցի աշակերտները չեն ունեցել դպրոցական առանձին հագուստ: «Հայոց դպրոցի երեխաները,- գրում է Ա. Բակունցը,- տրեխներով էին, տարվա մեծ մասը՝ գլխաբաց: Դպրոցից հետո նրանք աշխատում էին տանը և բանջարանոցում, օգնում էին ծնողներին՝ արհեստանոցներում, և պատահում էր, որ դպրոցից վերադառնալով, ներկարար Նեսու տղան հագնում էր հոր մեծ կոշիկները և ներկի դույլերը ձեռքին հոր հետ գնում էր աշխատանքի»[1]:

Նշենք, որ տվյալ ժամանակաշրջանում ինչպես արևելահայ մյուս ծխական դպրոցները, Գորիսի դպրոցը ևս, աչքի է ընկել դաստիարակության իր խստաբարո օրենքներով. տիրապետող էր տերթոդիկյան դաժան մեթոդը, իշխում էր ծեծը, ֆալախան: Ինչպես, օրինակ, «Հոտաղ» ստորագրությամբ հեղինակը, «Աշխատանք» շաբաթաթերթին հղած թղթակցությունում քննադատելով այդ մեթոդի կիրառումը դպրոցներում, գրում է. «Որպէս օրինակ կբերեմ Գորիսը, որն ամբողջ գաւառի կենդրոնատեղին է և քաղաք է համարւում: Երկար ու բարակ վիճաբանութիւններով Գորիսի երիտասարդութեանն յաջողւեց կէս-բարեխիղճ հոգաբարձուներ ընտրել: Նոքա այսպէս թէ այնպէս գործի գլուխ անցնելով բաց արին փակւած դպրոցի դռները: Երկու աշխարհական ուսուցիչների հետ գործի հրաւիրւեցաւ և քաղաքիս պետական դպրոցի կրօնուսոյց Տէր Խորէն քահանան (Խորեն քհն. Մելիք-Դադայանը - Գ. Ս.):

Խօսքս պիտի կենդրոնացնեմ Տէր Հօր այն ուղղութեան վերայ, որով նա կրթում էր մեր մանուկ աշակերտներին ու աշակերտուհիներին:

Ծեծ, մազերից ու ականջներից քաշել, ժամերով չոքեցնել գետնին, կարմրեցնել ապտակների տակ, ահա տէր Թոդիկի ճշմարիտ յաջորդի մանկավարժական ուղղութիւնը: Բայց դեռ աւելին կասեմ: Տէր Հայրը խեղճ մանուկների վերայ իւր ուժը փորձելով հանդերձ, ցոյց է տալիս նաև իւր հայհոյանքների պաշարը»[2]:

Ի դեպ՝ Խորեն քհն. Մելիք-Դադայանի անմիտ խստությունների մասին իր հուշերում հետաքրքրական դեպք է պատմում դպրոցի շրջանավարտ, Ա. Բակունցի դասընկերուհի Վարդանուշ Մինասյանը: Ըստ նրա՝ «Մեր դպրոցում էր սովորում Մարիամ Տեր-Մովսիսյան անուն-ազգանունով մի աղջիկ: Նա ականջներին ականջօղեր ուներ: Կրոնի դասատու Տեր-Խորենը նրան կարգադրեց հանել ականջօղերը: Մարիամը չլսեց, լուռ կախեց գլուխը և նայեց դասագրքին: Տերտերը բարկացավ, մոտեցավ աղջկան, ուժ գործադրելով՝ պոկեց ականջօղերից մեկը: Մարիամի ականջը պատռվեց, և նա, ուշքը կորցրած, ընկավ հատակին: Երեխաների աղաղակի վրա հավաքվեցին ուսուցիչները: Մարիամին տարան ուսուցչանոց, այդտեղից էլ՝ իրենց տուն: Այս դեպքից հետո բոլորի համար ատելի էր դարձել Տեր-Խորենը»[3]:

Ինչպես ժամանակի առաջադեմ մանկավարժներից շատերը, այնպես էլ Ս. Տեր-Մինասյանը, աշակերտների նկատմամբ ունենալով միանգամայն բարեհաճ վերաբերմունք, խստորեն քննադատում է ավանդական դարձած Տեր-Թոդիկի մեթոդը, դրա վնասաբեր հետևանքները: Դեռևս 1896 թ. գարնանը Զան-

1 **Բակունց Ա.**, Կյորես, Ընտրանի, էջ 414:

2 **Հոտաղ** [**Հակոբ Տեր-Հակոբյան**], Մեր գաւառի դպրոցները, «Աշխատանք», Թիֆլիզ, 1906, մայիսի 21, N 17, էջ 270:

3 Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, էջ 24-25:

գեզուրում շրջագայելով՝ ազգային գործիչ, գրականագետ Նիկոլ Աղբալյանը գրում էր, որ զանգեզուրցիներն ուսուցչի մասին ունեին հետևյալ վառ պատկերացումը. «Ուսումնական ըլի վարժապետը, որ անգին մարգարիտ ըլի՝ բնաւորութիւնը վատ էլ ընչի՞ ա պէտքը, էրեխայ թակող չըլի, դինջ ըլի, հարբեցող չըլի»[1]: Հետևելով հայ մեծանուն մանկավարժ Ղազարոս Աղայանի՝ ուսուցման ու դաստիարակության գործում առաջադրած ուսանելի մեթոդներին՝ Ս. Տեր-Մինասյանը ուսուցման հաջողության հիմքը իրավացիորեն համարել է ուսուցչի կողմից իր գործը և աշակերտներին սիրելը: Իսկ «Խորհրդածություն դաստիարակության վերա» հոդվածում Ղ. Աղայանը մատնանշում էր. «Ով չգիտե, որ աշակերտը ատելով վարժապետին, ատում է և նորա ուսմունքը, որքան որ այդ օգտակար լիներ, և ընդհակառակն, պատվելով վարժապետին, սիրում է և նորա դասերը...»[2]:

Ս. Տեր-Մինասյանը պահանջեց ուսուցիչներից՝ չօգտագործել պատժիչ դաժան միջոցներ (ծեծ, վախ, ֆիզիկական ներգործություն և այլն), իսկ կարգապահություն ապահովել ոչ թե մարմնական պատիժների միջոցով, այլ նրանց կողմից աշակերտների նկատմամբ ցուցաբերած ազնվաբարո, համբերատար, ներողամիտ ու մեղմ վերաբերմունքի շնորհիվ: Դեռևս 1906 թ. հունիսին «Ալիք» թերթում հրատարակած «Մեր դպրոցները» վերտառությամբ հոդվածում Ս. Տեր-Մինասյանը, քննադատելով դպրոցներում տիրող արատավոր երևույթները, գրում էր. «Օրինակ կը վերցնեմ Գորիսը, որը որպէս գաւառի կենտրոն օրինակ պիտի հանդիսանայ իր շրջապատին: ...Երկու աշխարհական ուսուցիչների հետ պաշտօնի է հրաւիրուում և որպէս կրօնուսոյց քաղաքիս քահանաներից մէկը:

Տէր-հայրը (Խորեն քհն. Մելիք-Դադայանը - Գ. Ս.) հրապարակ է բերել իր նախորդի Տէր-Թօդիկի ուղղութիւնը: Փալախկային փոխարինում է այժմ մազերից քաշքշելը, ժամերով չոքեցնելը, ապտակների տակ կարմրեցնելը, ականջներից քաշքշելը, իսկ շատ յաճախ էլ «շան-որդ»-ով, «քո հէրն անիծած»-ով պատուելը: Եւ այսպէ մեր մանուկները մի տարի տանջւեցին թէ՛ ֆիզիկապէս և թէ՛ մտաւորապէս: ...Պէտք է փոխել դպրոցների ներկայ դրութիւնը: Այդ է պահանջում մեր մատաղ մանուկների շահը և այդ գործի գլուխ անցածների սուրբ պարտականութիւնն է»[3]: Ելնելով վերոնշյալից՝ Ս. Տեր-Մինասյանը դպրոցի հոգաբարձուներին առաջարկում էր կրոնուսույցի դասերը ևս հանձնել աշխարհական ուսուցիչներին: Իր համեստ ու բարի էությամբ՝ Ս. Տեր-Մինասյանը դառնում է դպրոցի աշակերտների կողմից ամենասիրված ուսուցիչներից մեկը: Իսկ ժողովրդի աչքին գնալով աճում էր նրա հեղինակությունը:

Հարկ է նշել, որ Ս. Տեր-Մինասյանը միակը չէր լուսավորական իր գործունեությամբ: Նրա ակտիվ զինակիցների, համակիրների ու մշտապես աջակցողների թվում էին ժամանակի ճանաչված մանկավարժներ Տիգրան Սազանդարյանը, Հովի. Գրիգորյանը, Հակոբ Միրաքյանը և ուրիշներ:

Ձեռնամուխ լինելով դպրոցական գործի արդյունավետ կազմակերպման աշխատանքներին՝ գավառի ուսուցչական խմբերի միջև գործնական սերտ

1 **Աղբալեան Ն.**, Նամակներ Զանգեզուրի գաւառից, «Մուրճ», Թիֆլիս, 1900, N 4, էջ 496:

2 Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 4: Մանկավարժական երկեր, Երևան, 1963, էջ 67:

3 **Վ. Հ.** [**Սիմեոն Տեր-Մինասյան**], Մեր դպրոցները (Նամակ Զանգեզուրից), «Ալիք», Թիֆլիս, 1906, յունիսի 17, N 43:

համագործակցության հաստատելու նպատակով Ս. Տեր-Մինասյանի նախաձեռնությամբ ու գործուն մասնակցությամբ 1909 թ. նոյեմբերի 22-ին Գորիսում 13 ուսուցչի մասնակցությամբ հրավիրվում է շրջանային ուսուցչական ժողով: Ժողովը, ավարտելով իր աշխատանքները, որոշում է Զանգեզուրում բացել «Ուսուցչական միության մասնաճյուղ»: Միության վարչության անդամներ են ընտրվում Ս. Տեր-Մինասյանը, օր. Լիզա Տիգրանյանը և Տ. Սազանդարյանը: Որոշվում է նաև մոտ ապագայում հունվարյան տոներին, հրավիրել ավելի բազմամարդ ժողով՝ «...զբաղուելու մի շարք կարևոր խնդիրների...» լուծման աշխատանքներով[1]:

Ս. Տեր-Մինասյանը դասավանդել է հայոց պատմություն: Հայրենախոս ելույթներով ու ազգային զրույցներով երիտասարդ ուսուցիչը աշակերտների մեջ բորբոքում էր հայրենասիրության և հավատքի եռանդ, սերմանում մեծ հետաքրքրություն հայ ժողովրդի անցյալի ու ներկայի հոգևոր արժեքների նկատմամբ, ներգործուն ազդեցություն ունենալով հայրենասիրական և ազգասիրական դաստիարակության պրոցեսում: Ուշագրավ է այն իրողությունը, որ Ա. Բակունցի ուսումնառության վերջին տարում, նրա Հայոց պատմության ուսուցիչն է եղել Ս. Տեր-Մինասյանը, որի մասին իր հիշողություններում համակրանքով ու սիրով է խոսում Ա. Բակունցի դասընկեր Արմենակ Ղուկասյանը: Վերջինիս վկայության համաձայն՝ «Ակսել Բակունցի հետ ես սովորել եմ Գորիսի ծխական դպրոցում: Ինքը քաղաքի տղա էր, ես՝ Գորիս գյուղի (շենի): Երկուսս էլ պատմությունից շատ ուժեղ էինք, երևի դրա համար էլ մեր դասարանի դաստիարակ, պատմության ուսուցիչ Սիմոն [Տեր] Մինասյանը մեզ նստեցրել էր նույն նստարանին: Ալեքսանդրը գիրքը մի անգամ կարդում էր և առանց որևէ բան բաց թողնելու՝ պատմում. շատ ընդունակ էր: Համեստ էր, միշտ կոկիկ, մաքուր հագնված, շիկահեր էր, կապույտ աչքեր ուներ: Մեր ուսուցիչները՝ Հովհաննես Տեր-Գրիգորյանը[2], Տիգրան Սազանդարյանը, Սիմոն [Տեր] Մինասյանը և մնացյալները, որոնց ազգանունը ես հիմա չեմ հիշում, սիրում էին Ալեքսանդրին, գնահատում նրա ընդունակությունները»[3]:

Ա. Բակունցի՝ ծխական դպրոցում սովորելու տարիների մեկ ուրիշ դասընկեր, հետագայում ՀՍՍՌ վաստակավոր ուսուցիչ Ռուբեն Պետրոսյանն[4] իր հուշերում վկայում է. «Ակսելը դպրոցի ամենաառաջադեմ աշակերտն էր ու փայլում էր իր բարձր ընդունակություններով և մտքի պայծառությամբ»[5]: Ա. Բակունցի՝ հատկապես հայոց պատմություն առարկան ջերմեռանդությամբ սովորելը, վկայվում է նրա 1932 թ. գրած ինքնակենսագրականում, որտեղ ասվում է.

1 Տե՛ս **Ս.** [**Սազանդարեան Տ.**], Գօրիս, «Գաւառ», Գօրիս, 1909, դեկտեմբերի 5, N 1:

2 Հովի. Տեր-Գրիգորյանը հեղինակել է «Զանգեզուրից դէպի Հին Նախիջեւան (ճանապարհորդական նկատողութիւններ)» ուղեգրական նոթերը (տե՛ս «Նոր-Դար», Թիֆլիս, 1891, յունուարի 12, N 5, տե՛ս նաև յունուարի 17, N 7):

3 Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, էջ 22:

4 Ռ. Պետրոսյանը 1936 թ. մայիսի 13-ին նշանակվել է Գորիսի ոչ լրիվ երկրորդ (7-ամյա) միջնակարգ (տե՛ս «Կարմիր Զանգեզուր», Գորիս, 1936, մայիսի 23, N 36), այնուհետև՝ 8-ամյա դպրոցների տնօրեն (տե՛ս Ռ. Պետրոսյանի ելույթը, «Գրական թերթ», Երևան, 1959, հոկտեմբերի 30, N 44): 1940-ական թթ. տնօրեն է եղել նաև N 1 միջնակարգ դպրոցում (տե՛ս «Ստալինյան դրոշով», Գորիս, 1949, մայիսի 21, N 22), ուր հետագայում դասավանդել է «Հայոց լեզու և գրականություն» (տե՛ս «Ստալինյան դրոշով», Գորիս, 1952, մարտի 8, N 11):

5 Ռ. Պետրոսյանի ելույթը, «Գրական թերթ», Երևան, 1959, հոկտեմբերի 30, N 44:

«[1]905-ին գնացել եմ ծխական դպրոցը: Գնացել եմ, այսինքն՝ իմ կամքով և իմ նախաձեռնությամբ: Սովորել եմ 5 տարի՝ հայոց լեզու, մի քիչ ռուսերեն, մի քիչ աշխարհագրություն, **բավական շատ հայոց պատմություն** (ընդգծումը մերն է՝ Գ. Ս.), և՛ երգ, և՛ վայելչագրություն»[1]:

Հիրավի, ապագա գրողի ստեղծագործության մեջ զգալի տեղ է գրավել պատմական թեմատիկան: Ժամանակակիցների պատմածներով՝ Ա. Բակունցը մեծ հետաքրքրություն է ունեցել հայոց պատմության, պատմական տարբեր հնությունների նկատմամբ: Պահպանված տեղեկությունների համաձայն՝ դեռևս 1926 թ-ից Բակունցը զբաղվել է Տաթևի վանքի, Գլաձորի ու Տաթևի համալսարանների պատմությամբ: Այդ նպատակով նա մի քանի անգամ լինում է Տաթևում, ուսումնասիրում վանքի ավերակներն ու մամռապատ արձանագրությունները[2]:

Դպրոցում մշտապես նշվել են ազգային տոները, ինչպես նաև կազմակերպվել են հայ գրական գործիչներին նվիրված միջոցառումներ: Ինչպես, օրինակ, «Սուրբ Վարդանանց զորավարների և 1036 վկաների» հիշատակության օրվա առթիվ 1910 թ. մարտի 25 դպրոցում կազմակերպվել է հանդես[3]: Նույն թվականի մայիսի 2-ին կազմակերպվել է գրական երեկո՝ նվիրված բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանին: Բանաստեղծի կյանքին ու գործունեությունը նվիրված զեկուցումով հանդես է եկել Ս. Տեր-Մինասյանը: «Գաւառն» օրվա առիթով գրում է. «Ամսոյս 2-ին տեղիս ծխական դպրոցում կայացաւ դպրոցական հանդէս նուիրուած բանաստեղծ Ա. Ծատուրեանին: Հանդիսին ըստ պատշաձի խօսեց աւագ-ուսուցիչը: ...Յաջող էր մի քանի ոտանաւորների արտասանութիւնը»[4]:

Մեծ են Ս. Տեր-Մինասյանի ջանքերը նաև գավառում դպրոցաշինության բնագավառում: Առանձնապես նշանակալի է նրա կատարած աշխատանքը եկեղեցական-ծխական դպրոցը շենքային հարմարավետ պայմաններով ապահովվելու և դրա հիման վրա մոտ ապագայում Զանգեզուրի գավառում Կենտրոնական միջնակարգ դպրոց բացելու ուղղությամբ, որն իր բարերար սերմերը պետք է սփռեր ողջ գավառով մեկ[5]: Դեռևս Վաղարշապատում աշխատած ժամանակաշրջանում՝ Ս. Տեր-Մինասյանը Ալեքսանդրապոլում լույս տեսնող

1 **Բակունց Ա.**, Երկեր, հ. IV, Երևան, 1984, էջ 9:

2 Տե՛ս **Պետրոսյան Ռ.**, Երկու հանդիպում, «Որոտան», Գորիս, 1959, հոկտեմբերի 25, N 101, տե՛ս նաև **Իշխանյան Ռ.**, Ակսել Բակունց: Կենսագրություն և մատենագիտություն, Երևան, 1960, էջ 66:

3 Տե՛ս «Գաւառ», Գօրիս, 1910, փետրուարի 21, N 8:

4 «Գաւառ», Գօրիս, 1910, մայիսի 9, N 18:

5 Կենտրոնական դպրոցի շինարարությունն օր առաջ սկսելուն ձեռնամուխ Ս. Տեր-Մինասյանը նյութական աջակցության նպատակով դիմում է գորիսեցի մեծահարուստներին: Ս. Տեր-Մինասյանի հրավերով 1910 թ. ապրիլի վերջերին ծխական դպրոցի դահլիճում 30 ծխականների մասնակցությամբ տեղի է ունենում խորհրդակցություն, որի արդյունքում որոշում է կայացվում ընտրել ութ հոգուց բաղկացած «Շինարարական հանձնաժողով»՝ դպրոցի շինարարական աշխատանքները կանոնակարգելու համար: Հանձնաժողովի անդամներ են ընտրվում բժիշկ Միք. Պարոնյանը, Արշակ Ղազարյանը, Աղ. Բաղրամյանը, Աստվածատուր Բարսեղյանը, Գ. Միրումյանը, Գ. Յոլյանը, Հ. Մելքումյանը և Մելիք քին. Օհանյանը: Խորհրդակցությունից հետո կատարված հանգանակության արդյունքում հավաքվում է 600 ռ. (տե՛ս **Վ.** [**Սիմեոն Տեր-Մինասյան**], Գօրիս, «Գաւառ», Գօրիս, 1910, մայիսի 2, N 17):

«Ժայռ» թերթում «Երկու խօսք զանգեզուրցիներին»[1] վերտառությամբ հոդվածում բարձրացրել էր այդ հարցը: «Մեր կարծիքով,- գրում էր նա,- ամենանպատակայարմարը և ամենագործնականը կլինի Գօրիսում բանալ չորս դասեան, կամ հէնց վեցդասեան հայկական դպրոց, որը կլինի գիւղերի ծխականների շարունակութիւնը: Այդպիսի դպրոցը դիւրութիւն կտայ գիւղացիներին իրենց որդիներին Գօրիս պահել, քան Շուշի տանել, որն ունի իւր շատ և շատ անյարմարութիւնները: Ղափանցին կամ Սիսիանցին հեշտութեամբ իւր որդին Գօրիսում կպահի, որովհետև նա այնտեղ ունի բարեկամներ, ծանօթներ, և վերջապէս ինքը յաճախ այնտեղ է լինում, իւր աչքով կտեսնի իւր երեխայի խէրն էլ, շառն էլ: ...**Գօրիսում կբացւի ծխական դպրոցից անկախ, ասածս կենդրոնական հայ դպրոցը, որը կլինի ամբողջ գաւառի սեփականութիւնը, կպահւի նորա անմիջական հսկողութեան և օժանդակութեան տակ, աշակերտների ընդունելութիւնն էլ կլինի պրոպորցիոնալ սիստեմով** (ընդգծումը մերն է՝ Գ. Ս.)»[2]:

Իր նպատակի կենսագործման համար Ս. Տեր-Մինասյանը «Գաւառ» շաբաթաթերթի երեք համարներում հրապարակեց «Կենտրոնական դպրոցը» վերտառությամբ հոդվածաշարը, որում կարևորվում և հիմնավորվում էր այդօրինակ դպրոցի անհրաժեշտությունը[3]: «...գաւառի մեծամասնութիւնը,- գրում էր Ս. Տեր-Մինասյանը,- պաս է մնացել աւելի բարձր կրթութիւնից, նրան ակամայից բաւարարողը եղել են տարրական այն փշրանքները, որոնք տւել են գաւառի ներսի դպրոցները, այն էլ ո՞վ գիտէ ուսուցիչներին ձեռքով: Տասնեակ տարիներով մեր գաւառը զգացել է այդ պակասը, զգում է ներկայումս էլ այդ թերին, սակայն աւելի անմխիթարականն այն է, որ լռութեամբ է հանդիպում դրան, անտարբերութեան տենչով է վերաբերւում դէպի այդ հարցը, դէպի իր ապագայի համար խիստ մեծ նշանակութիւն ունեցող աւելի քան կարևոր խնդիրը: Այսօր շատ փոքրիկ շրջանից խնդիրը հրապարակ է նետւել, կենտրոնական դպրոց հիմնելու գեղեցիկ միտքն է արծարծւում, որին արդէն մենք և մեզ հետ և ոչ ոք իրաւունք չունի լռութեամբ հանդիպելու, որովհետև նա գալիս է ծածկելու մեր խիստ զգալի բացը, գալիս է մի անգամ ընդ միշտ զանգեզուրցուն հանելու դժւարութեան գրկից»[4]: Կառուցվելիք դպրոցի նախագծի հեղինակն էր ժամանակի հայտնի ճարտարապետ կապանցի Ղահրաման Մելիք-Ստեփանյանը[5]:

Ս. Տեր-Մինասյանի համակ ուշադրությունը միտված էր Կենտրոնական դպրոցի շինարարության վրա: Կազմակերպչական մի շարք աշխատանքնե-

---

1 Տե՛ս **Տէր-Մինասեան Սիմ.**, Երկու խօսք զանգեզուրցիներին, «Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1908, հոկտեմբերի 2, N 74; հոկտեմբերի 5, N 75:

2 **Տէր-Մինասեան Սիմ.**, Երկու խօսք զանգեզուրցիներին, «Ժայռ», Ալէքսանդրապոլ, 1908, հոկտեմբերի 5, N 75:

3 Տե՛ս **Հ-եան** [**Սիմեոն Տեր-Մինասյան**], Կենտրոնական դպրոցը (I), «Գաւառ», Գօրիս, 1910, մայիսի 9, N 8; (II), մայիսի 16, N 19; (III), մայիսի 23, N 20:

4 **Հ-եան** [**Սիմեոն Տեր-Մինասյան**], Կենտրոնական դպրոցը (II), «Գաւառ», Գօրիս, 1910, մայիսի 16, N 19:

5 Տե՛ս «Գաւառ», Գօրիս, 1910, հունիսի 19, N 23: Ղ. Մելիք-Ստեփանյանը ծնվել է (ծննդյան և մահվան թվերն անհայտ են) Կապանի Առաջաձոր գյուղում: Եղբայրն էր ՀՅԴ անդամ, ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, հետագայում Կապանի ազգային խորհրդի նախագահ Սմբատ Մելիք-Ստեփանյանի: Ղ. Մելիք-Ստեփանյանը ճարտարապետի կրթությունը ստացել էր Սանկտ Պետերբուրգում: Ուսումն ավարտելուց հետո տեղափոխվել էր ծննդավայր: Հետագայում վերադարձել է Սանկտ Պետերբուրգ:

ից հետո դպրոցի շինության հիմնարկեքը 1910 թ. օգոստոսի 8-ին[1] հանդիսա-

1 Գորիսում գտնվելու օրերին, Խորեն եպս. Մուրադբեկյանը տեսակցում է ծնունդով Քարահունջ գյուղից, XIX դ. երկրորդ կեսի հայ արդյունաբերող և խոշոր բարեգործ Առաքել Աստվածատուրի Ծատուրյանի եղբոր՝ Միրզա Ծատուրյանի հետ և քննարկում վերջինիս կողմից դպրոցի շինարարությանը տրամադրվելիք ֆինանսական աջակցության հարցը: Ինչպես ասվում է Խորեն եպս. Մուրադբեկյանի՝ Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցուն 1910 թ. օգոստոսի 21-ին հղած գրությունում, «...Գեորիսի ծխական դպրոցը ամենաապահովն է և որ գլխաւորն է սեպհական շէնք չունի, հէնց իմ այնտեղ եղածս ժամանակ նոր հոգաբարձութիւնը մեծ դժուարութեամբ բնակարան էր վարձում դպրոցի համար, որովհետև անցեալ տարուց դպրոցական շէնքի տէրը այլևս չէր համաձայնւում տալ իր բնակարանը: Վերոգրեալն ուշադրութեան առնելով կամեցայ զարկ տալ շինութեան գործն ու խօսելով պ. Միրզա Ծատուրեանի հետ, համոզեցի նրան կատարել իր խոստումը, առանց սպասելու թէ քաղաքացիները որ չափով և ե՞րբ օգնութեան կը հասնին: Բարեբախտաբար Միրզա Ապեր Ծատուրեանը չը մերժեց խնդիրս, իսկոյն յանձնեց ինձ մի հազար ռուբլի ու ստորագրութեամբ պարտաւորուեց գործը սկսելուց փոքր ինչ յետոյ երկու նուագում տալ շինութեան հոգաբարձութեանը մնացած երկու հազար ռուբլին» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 898, թ. 24): Ի դեպ՝ 1911 թ., երբ մահանում է Միրզա Ծատուրյանը, նրա որդիները շարունակում իրենց հոր կիսատ թողած գործը՝ ի կատար ածելով նրա «...միակ յիշատակը» (**Սազանդարեան** [**Տ.**], Գորիս (համառոտակի ուսումնասիրութիւն), «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունուարի 29, N 8):

Նշենք, որ նյութական միջոցների սղության պատճառով շինարարությունը ձգձգվել է: Շինարարական աշխատանքները լայն թափ են ստացել 1913 թ. կեսերից՝ Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդ (1913 թ. հունվարի 18-1916 թ. կեսեր) Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանի հանգանակած դրամական միջոցների շնորհիվ: 1913 թ. սեպտեմբերի 25-ին առաջնորդարանում հրավիրված «Շինարարական հանձնաժողովի» նիստում որոշվում է. ա) «Շինարարական հանձնաժողովում» որպես Մ. արքեպս. Տեր-Մովսիսյանի ներկայացուցիչ ընդգրկել նրա եղբորը՝ Առաքել Տեր-Մովսիսյանին, բ) Առաքել Տեր-Մովսիսյանին ճանաչել որպես հանձնաժողովի նախագահ, գ) հանձնաժողովի անդամ Ղազար Մալինցյանին համարել «Շինարարական հանձնաժողովի» գանձապահ, իսկ Աստվածատուր Գևորգյանին՝ քարտուղար (տե՛ս Մատենադարան, Մեսրոպ Մագիստրոսի արխիվ, թղթ. 2, վավ. 124, թ. 42): Դպրոցի եռահարկ շինությունն ավարտին հասցվեց միայն 1916 թ. ամռանը (տե՛ս **Բէկ** Գորիս, «Հորիզոն», Թիֆլիս, 1916, յունիսի 16, N 132):

Եկեղեցական-ծխական դպրոցի 1916-1917 թթ. ուսումնական տարվա դասընթացներն արդեն անցկացվել են նորահիմն գեղեցկաշեն դպրոցում (տե՛ս Մատենադարան, Մեսրոպ Մագիստրոսի արխիվ, թղթ. 2, վավ. 124, թ. 124, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 25-ի շրջերես): Դպրոցի հոգաբարձության խորհրդի անդամ Ղազար Մալինցյանի՝ Մ. արքեպ. Տեր-Մովսիսյանին 1916 թ. նոյեմբերի 10-ին հղած գրությունում այդ մասին ասվում է. «Հոգաբարձութեան նամակից արդեն իմանում էք, որ Ձեր խնամքով շինելիք դպրոցը յանձնել ենք Գօրիսի ծխական դպրոցի հոգաբարձութեանը, որտեղ տեղաորուած են 210 երկսեռ երեխաներ: Գօրիսը արդեն հրճւում է այսպիսի մի հասարակական հիմնարկութեան վերայ Ձեր շնորհիւն» (տե՛ս Մատենադարան, Մեսրոպ Մագիստրոսի արխիվ, թղթ. 2, վավ. 124, թ. 143): Գորիսի հասարակության անունից դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Խուրշուդ Մելիք-Օհանյանի և ավագ ուսուցիչ Արշակ Առստամյանի՝ դպրոցի բարերար Մ. արքեպ. Տեր-Մովսիսյանին Շուշիում լույս տեսնող «Փայլակ» լրագրի միջոցով հայտնած երախտագիտության խոսքում ասվում էր. «Թոյլ տուէք ձեր յարգելի թերթի միջոցով Գորիսի հայ հասարակութեան կողմից մեր երախտագիտական խորին շնորհակալութիւնները յայտնել Թիֆլիզի թեմի նախկին առաջնորդ գերապատիւ տ. Մեսրովբ եպիսկոպոսին, որի անդուլ ջանքերի շնորհիւ քաղաքումս կառուցած և արդէն պատրաստ է 40.000 ռուբլիանոց մի փառաւոր դպրոցական շինութիւն և յայտնւած է, որ դպրոցիս յայտկացրւած է նաև անձեռնմխելի մեծ գումար» (Նամակ խմբագրութեան: Գորիս, 12 հոկտեմբերի, «Փայլակ», Շուշի, 1916, հոկտեմբերի 20, N 80):

Հիրավի, շենքն ունեցել է գեղեցիկ տեսք: Ինչպես նկարագրել է Տ. Սազանդարյանը. «Շէնքը վեհ և գեղեցիկ տպաւորութիւն է թողնում նայողի վրա, և իսկապէս քաղաքի առաջին շէնքը դպրոցը պէտք է լինի. գեղեցիկ, մեծ, յարմար և փարթամ» (**Սազ-եան**, Տեղեկատու Զանգեզուրի, «Մշակ», Թիֆլիս, 1915, դեկտեմբերի 16, N 278): Մեսրոպ արքեպ. Տեր-Մովսիսյանը, 1934 թ. փետրվարի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդին հղած գրությունում թվարկելով իր կատարած ձեռնարկները, գրում է. «Ունեմ շինարարական մնայուն կարեւոր զուտ կուլտուրական եւ տնտեսական ձեռնարկներ: ...Զանգեզուրի գլխաւոր Գորիս քաղաքում խիստ մեծ եռյարկանի դպրոցական շինութիւն...» (**Տէր-Վարդանեան Գ.**, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան: Կենսագործունէութիւնը: «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց», մատենագիտութիւն, Երեւան, 1999, էջ 28):

Շինության ավարտից հետո այդտեղ են ցանկացել իրենց հետագա ուսումը շարունակել նաև շրջակա գյուղերի աշակերտներից շատերը: Ինչպես, օրինակ, Տաթևի փոխանորդության

վոր Սուրբ պատարագից հետո կատարում է պաշտոնական այցով Գորիսում գտնվող Երևանի թեմի փոխառաջնորդ Խորեն եպս. Մուրադբեկյանը[1]: «Գաւառ» շաբաթաթերթն օրվա առիթով տեղեկացնում էր. «Այսօր հանդիսաւոր պատարագից յետոյ Երևանի փոխ-թեմական բարձրապատիւ Խորէն վարդապետ Մուրադբէգեանը մասնակցութեամբ տեղական քահանայական դասի և ժողովրդի, կկատարի Կենտրոնական դպրոցի հիմնադրութիւնը»[2]:

Առաջ անցնելով նշենք, որ նախքան Կենտրոնական դպրոցի շինության ավարտը, 1911-1912 թթ. ուսումնական տարվանից դպրոցը տեղավորվել էր «Պասսաժի» խանութների մեջ[3], որը 1910 թ. սկզբներին դեռևս գտնվում էր կիսաշեն վիճակում[4]: Երևանի թեմի 1911-1912 թթ. ծխական դպրոցների տեղեկագրում Գորիսի դպրոցի շենքային պայմանների մասին ասվում է. «Շէնքը սեպհական չէ, անյարմար, բաղկացած է 3 սենեակներից»[5]: «Գորիսի դպրոցը,- գրում է Տ. Սազանդարյանը,- տեղաւորուած է շուկայի կենտրոնում, նորաշէն պասսաժի իրար կից 7 խանութների մէջ: Խանութներ ասելով, արդէն ամեն ինչ հասկանալի է. դասարանները չունին պատուհաններ, լոյսը ընկնում է ապակեծածկ դռներով, որտեղից ել ու մուտք են անում: Օդի մաքրութիւն ասած բանը գոյութիւն չունի: Պատշգամ, միջանցք գոյութիւն չունին, բացօդեայ տեղից մտնում են դասարան, խանութ: Դպրոցը չունի բակ, այլ հրապարակ է, ճանա-

---

դպրոցական տեսուչ Հ. Ղարաբեկյանի՝ Երևանի թեմի փոխթեմականին 1917 թ. հունվարի 10-ին հղած զեկուցագրում Գորիս գյուղի (Նոր կամ Ներքին Գորիս) ծխական դպրոցի աշակերտների թվի նվազման պատճառի մասին ասվում է. «Գորիս գիւղի դպրոցի սաների թւի փոքրութեան պատճառը թէ նոր բացւած մինիստրական դպրոցներն են քաղաքում և թէ մանաւանդ քաղաքի ծխ.[ական] դպրոցը, որի նոր շինութիւնը դէպի իրեն է գրաւել ոչ միայն գիւղի ծխ.[ական] դպրոցի աշակերտներին, այլ նոյն իսկ մինիստրական դպրոցների աշակերտներից» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 451, թ. 22):

Շինության երրորդ հարկում գործել է Գորիսի թատրոնը: Ինչպես վկայում է Ս. Խանզադյանը. «...երրորդ հարկում շատ մեծ դահլիճ կա՝ մեծ բեմով ու մի քանի նախասրահներով: Այս սրահին մենք ուղղակի «թատրոն» ենք ասում: Առաջներում այդտեղ շատ ներկայացումներ են տվել» (**Խանզադյան Ս.**, Հորս հետ և առանց հորս, էջ 168):

Հետագա տարիներին շենքը ծառայել է տարբեր նպատակների: 1924 թ. փետրվարի 9-ից շենքում գործել է «Լուկաշինի» անվան 7-ամյա, այնուհետև նրա հիմքի վրա ստեղծված լրիվ միջնակարգ, ապա երկրորդ 7-ամյա, այնուհետև՝ 8-ամյա դպրոցները (տե՛ս «Կարմիր Զանգեզուր», Գորիս, 1936, մարտի 11, N 16, տե՛ս նաև **Գիչունց Ռ.**, Ուսուցիչների ջանասեր աշխատանքի շնորհիվ, «Ստալինյան դրոշով», Գորիս, 1952, մարտի 30, N 14, տե՛ս նաև **Օհանջանյան Հ.**, Քննությունները ընթանում են հաջող, «Ստալինյան դրոշով», Գորիս, 1952, յունիսի 1, N 31): Ի դեպ, վերջին դպրոցի հիմքի վրա 1952-1953 թթ. ուս. տարում բացվել է քաղաքի N 2 միջնակարգ դպրոցը (տե՛ս «Սյունյաց երկիր», Կապան, 2011, մայիսի 28, N 10):

Շենքը քանդվել է 1970-ական թթ. սկզբներին: Շինության անմիջապես ետնամասում Խորենացի փ. N 53 հասցեում ներկայումս կանգուն է «Գորիս» հյուրանոցը, որի կառուցման ժամանակ հողածածկվել են շինության հիմնապատերն ու կառույցի կիսաքանդ մնացորդները: Հյուրանոցի սեփականատեր Սենիկ Ջուլհակյանի նախաձեռնությամբ 2018 թ. ապրիլին իրականացված հողափորման մեծածավալ աշխատանքների արդյունքում կրկին բացվել են շինության հիմնապատերն ու կիսաքանդ կառույցները: Ըստ նախագծի՝ հնավայրում պետք է ստեղծվի պատմաազգագրական թանգարան:

1 Խորեն վրդ. Մուրադբեկյանը Երևանի թեմի փոխառաջնորդ է կարգվել 1908 թ. դեկտեմբերի 13-ին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10956, թ. 1, տե՛ս նաև «Ախուրեան», Ալէքսանդրապոլ, 1909, դեկտեմբերի 5, N 85):

2 «Գաւառ», Գորիս, 1910, օգոստոսի 8, N 29:

3 Տե՛ս **Սազանդարեան** [**Տ.**], Մեր դպրոցը (II), «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունուարի 19, N 5:

4 Տե՛ս **Սազանդարեան** [**Տ.**], Մեր քաղաքի վարիչների քառամեայ գործունէութիւնից, «Գաւառ», Գորիս, 1910, յունուարի 24, N 4:

5 ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ, 157, թ. 1:

պարի, այն էլ բոլորի համար: Մանկավարժութիւնը, որքան էլ բարձր հիմունքներով տարուի այսպիսի անյարմար դպրոցական շէնքում, այնուամենայնիւ ոչ մի արդիւնք չի տալ»[1]:

Ս. Տեր-Մինասյան հմուտ ու բանիմաց մանկավարժի համբավը, դուրս գալով Զանգեզուրի գավառի շրջանակներից, արդեն արժանացել էր համաժողովրդական ճանաչման: Երևանի թեմական խորհուրդը հաշվի առնելով Ս. Տեր-Մինասյանի արդյունավետ գործունեությունը ավագ ուսուցչի պաշտոնում՝ 1910 թ. օգոստոսի սկզբներին նրան նշանակում է Երևանի թեմի ծխական դպրոցների տեսուչների (թեմն ուներ երկու տեսուչ) օգնական[2], որի գործունեությունը կենտրոնացած էր թեմի երրորդ մասում՝ Զանգեզուրի գավառում[3]:

1910-11 ուսումնական տարվանից դպրոցի ավագ ուսուցչի պաշտոնում Ս. Տեր-Մինասյանին փոխարինում է Սարգիս Սիմոնյանը (1905 թ. ավարտել էր Գևորգյան ճեմարանը, ապա՝ Ներսիսյան դպրոցի VII դասարանը)[4]: Նույն ուսումնական տարում դպրոցը եղել է հնգամյա երկսեռ. սովորել է 124 աշակերտ (55 տղա, 69 աղջիկ)[5], ունեցել է 200 կտոր գրքից բաղկացած գրադարան[6]: Ուսուցչական կազմն էր՝ Ս. Սիմոնյան, Աշխեն Մելիք-Շահնազարյան (ավարտել է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիան), Փիրուզա Ժամհարյանը (ավարտել է Շուշիի կարուձևի դպրոցը), Տիգրան Սազանդարյանը (1903 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը) և Հովհաննես Գրիգորյանը (ավարտել է Շուշիի քաղաքային դպրոցը)[7]: Դպրոցի հոգաբարձուներն էին՝ Ղազար Մալինցյանը, Նիկողայոս Հովսեփյանը, Ջումշուդ Տեր-Մովսիսյանը, Գալուստ Բաղիրյանը և Գևորգ Պալասանյանը[8]:

Ավագ ուսուցչի պաշտոնում Ս. Սիմոնյանին հաջորդել է Հակոբ Խանլարյանը (ավարտել է Շուշիի թեմական դպրոցը)[9]: 1911-1912 ուսումնական տարում դպրոցը դեռևս չի ունեցել սեփական շինություն: Նույն թվականին դարձել է քառամյա, ուր սովորել են 111 աշակերտ (44 տղա, 67 աղջիկ) [10]: Գրադարանն ունեցել է 300 կտոր գիրք: Դպրոցի ուսուցիչներն էին Հովհաննես Գրիգորյանը և Տ. Սազանդարյանը[11]: Դպրոցի հոգաբարձուներն էին Ղազար Մալինցյանը, Նիկոլայ Հովսեփյանը, Ջումշուդ Տեր-Մովսիսյանը, Գալուստ Բաղիրյանը և Գևորգ Պալասանյանը[12]: 1913-14 ուսումնական տարում դպրոցը եղել է հնգամ-

1 Սազանդարեան [Տ.], Մեր դպրոցը (II), «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունուարի 19, N 5:

2 Տե՛ս **Աւետիսեան Մ.**, Թեմական տեսուչ, «Աշխատանք», Երեւան, 1916, մայիսի 7, N 2:

3 Տե՛ս «Գաւառ», Գօրիս, 1910, սեպտեմբերի 19, N 34, տե՛ս նաև **Գ. Ղ.** [**Գրիգոր Ղարագյոզյան**], Սիմէօն Տէր-Մինասեան, «Նոր դպրոց», Թիֆլիս, 1912, յունիս, N 21-24, էջ 118-119:

4 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 156, թ. 31-ի շրջերես:

5 Տե՛ս Ակսել Բակունցի տուն-թանգարան, գիտաօժանդակ ֆոնդ, փ. դ 402, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 156, թ. 31-32:

6 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև **Սիւնեցի Լևոն** [**Միքայելյան Լևոն**], Գորիս, «Հորիզոն», Թիֆլիս, 1910, փետրվարի 19, դ 39:

7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 156, թ. 31-ի շրջերես, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 157, թ. 1:

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 157, թ. 1:

9 Տե՛ս **Եսայեան Մ.**, Մեծապատիւ մուրացկանները, «Փայլակ», Շուշի, 1915, մայիսի 10, N 18: Հ. Խանլարյանը նախքան այդ, ուսուցիչ է աշխատել Շուշիում (տե՛ս «Փայլակ», Թիֆլիս, 1907, ապրիլի 28, N 14):

10 Տե՛ս **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 119:

11 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, g. 1, գ. 157, թ. 1:

12 Տե՛ս նույն տեղում:

յա և ունեցել է 106 աշակերտ (44 տղա, 66 աղջիկ), 4 ուսուցիչ[1]: Ուսուցիչներն էին Հակոբ Խանլարյանը, Աշխեն Մելիք-Շահնազարյանը, Սաթենիկ Բաբայանը (ավարտել է Ալեքսանդրապոլի օրիորդաց գիմնազիան), Արշակ Առստամյանը (ավարտել է Շուշիի թեմական դպրոցը) և Գրիգոր Պայլանը[2]: Նույն թվականին հոգաբարձուներն էին Ղազար Մալինցյանը, Դավիթ Խուրշուդյանը, Հակոբ Միրաքյանը և Արտեմ Սարգսյանը[3]:

1914-15 ուսումնական տարում դպրոցն ունեցել է 126 աշակերտ (57 տղա, 69 աղջիկ). դասավանդել է 5 ուսուցիչ[4]: 1915-16 ուսումնական տարում եղել է եռամյա և ունեցել է 107 (48 տղա, 59 աղջիկ) աշակերտ և 4 ուսուցիչ[5]: Նույն ուսումնական տարում դպրոցում դասավանդել են Հակոբ Խաչատրյանը (ավարտել է Շուշիի թեմական դպրոցը), Արշակ Առստամյանը, Աշխեն Մելիք-Շահնազարյանը, Զարուհի Մինասյանը (ավարտել է Բաքվի կարուձևի դպրոցը)[6]: Դպրոցի հոգաբարձուներն էին Խուրշուդ Մելիք-Օհանյանը, Իսաջան Պողոսյանը, Արամ Պարոնյանը և Կարապետ Մելիք-Օհանյանը[7]:

1916-1917 թթ. ուսումնական տարվանից դասերն արդեն անցկացվել են հատուկ այդ նպատակով կառուցված եռահարկ շինության մեջ[8]: Նույն ուսումնական տարում դպրոցը եղել է 4-ամյա՝ 202 աշակերտով (95 տղա, 107 աղջիկ)[9]: Դպրոցի հոգաբարձության նախագահն էր Խուրշուդ Մելիք-Օհանյանը, ավագ ուսուցիչը՝ Արշակ Առստամյանը[10]:

Երկրում ծայր առած ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքով 1917-1918 թթ. ուսումնական տարում դպրոցը չի գործել: Վերաբացվել է Հայոց անկախ պետականության վերականգնումից հետո (1918 թ. մայիսի 28), երբ Հայաստանի խորհուրդը 1918 թ. սեպտեմբերի 11-ին ընդունեց «Դպրոցի կառավարման մասին» օրինագիծը՝ 1919 թ. մայիսին ընդունած որոշումներով: Հանրային կրթության նախարարությունը նախատեսում էր բացել տարրական և միջնակարգ դպրոցներ[11]: 1919 թ. հունիսի 7-ին Հանրային կրթության նախարարի պաշտոնակատար Սիրական Տիգրանյանը միջնորդում է ՀՀ կառավարությանը ծրագրել միջնակարգի վերածել Գորիսի, Վաղարշապատի, Աշտարակի, Իգդիրի, Նոր Բայազետի, Ագուլիսի և այլն (ընդամենը՝ 12) ծխական դպրոցները՝ տարեկան մի նոր դասարան ավելացնելով[12]: 1919 թ. սեպտեմբերից, երբ Հանրապետությունում պետականացվեցին եկեղեցական-ծխական

1 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 162, թ. 27-28, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 163, թ. 8:
2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 162, թ. 28:
3 Տե՛ս նույն տեղում:
4 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 417, թ. 5:
5 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 165, թ. 24-25:
6 Տե՛ս նույն տեղում, թ. 24:
7 Տե՛ս նույն տեղում, թ. 25:
8 Տե՛ս Մատենադարան, Մեսրոպ Մագիստրոսի արխիվ, թղթ. 2, վավ. 124, թ. 124, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 25-ի շրջերես:
9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 451, թ. 23:
10 Տե՛ս Նամակ խմբագրութեան: Գորիս, 12 հոկտեմբերի, «Փայլակ», Շուշի, 1916, հոկտեմբերի 20, N 80:
11 Տե՛ս **Իրազեկ** [**Հակոբ Տեր-Հակոբյան**], Հարկաւոր է շտապել, «Զանգ», Երևան, 1918, սեպտեմբերի 24, № 56, տե՛ս նաև **Ռաշմաճեան Տ.**, Պէտք է բաց անել բոլոր տիպի դպրոցները, «Զանգ», Երևան, 1918, հոկտեմբերի 2, № 58, տե՛ս նաև **Վարդանյան Գ.**, Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ., Երևան, 2003, էջ 9-10, 25:
12 Տե՛ս Կառաւարութեան որոշումներ, «Աշխատանք», Երեւան, 1919, յունիսի 14, N 32:

բոլոր դպրոցները[1], 1920 թ. սկզբներին Գորիսում արդեն գործում էր Ա աստիճանի (տարրական) 2 դպրոց[2]:

Այսպիսով՝ ընդհանրացնելով Գորիսի Սբ. Հռիփսիմեի եկեղեցական-ծխական դպրոցի գործունեությունը, նշենք, որ այն անգնահատելի դեր է ունեցել ոչ միայն Գորիսի, այլև ամբողջ գավառի կրթամշակութային կյանքում:

---

1 Օրենսդրորեն ամրագրվել է 1920 թ. մարտին (տե՛ս **Վարդանյան Գ.**, Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ., էջ 38, 39):

2 Տե՛ս «Սիւնիք», Գորիս, 1920, փետրուարի 15, № 6: Տեղին է հավելել, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ ստեղծվեց կրթական նոր համակարգ, ՀԽՍՀ Ժողկոմխորհը 1921 թ. սեպտեմբերի 21-ին ընդունեց դեկրետ՝ անգրագիտության վերացման մասին: Որոշում ընդունվեց՝ հանրապետությունում ունենալ երկաստիճան դպրոց՝ տարրական և 7-ամյա: Զանգեզուրի գավառում Բ աստիճանի (7-ամյա) դպրոց բացելու անհրաժեշտության մասին Գավգործկոմի դպրոցական ենթաբաժնի վարիչ Մելիքսեթ Եսայանի՝ Գավլուսբաժնի վարիչին 1923 թ. օգոստոսին հղած զեկուցագրում ասվում էր. «Զանգեզուրը կարիք ունի 2-րդ աստիճանի մի դպրոցի: Տարիներ առաջ ծխական և տարրական դպրոցները ավարտած բազմաթիվ աշակերտ-աշակերտուհիներ թափառում են փողոցներում, որովհետև միջոցներ չունեն իրենց կրթությունը շարունակելու Երևանում, Թիֆլիսում, Բաքվում: ...Անցյալ ուսումն [ական] տարվա սկզբին լուսժողկոմի ներկայացուցիչ ընկեր Կարապետ Մելիք-Օհանջանյանը հատուկ ուշադրության առարկա էր դարձրել այդ հարցը, անգամ սկսել էր վերանորոգել Զանգեզուրի նախկին կենտրոնական վարժարանի շենքը, բայց նրա Երևան մեկնելու և նյութեղենի ու նյութական միջոցների պակասության պատճառով սկսված աշխատանքները կանգ առան» (**Գրիգորյան Ռ.**, Ղափանի գավառակային լուսբաժնի առաջին քայլերը (1921-1922 թթ.), ԲՀԱ, Երևան, 1969, N 2, էջ 58):

ՀԿԿ կենտկոմի քարտուղար և ՀՍԽՀ Ժողտնտխորհի նախագահ Սարգիս Լուկաշին-Սրապիոնյանի 1923 թ. օգոստոսի 31-ին Գորիս կատարած աշխատանքային այցից հետո Զանգեզուրի գավգործկոմի 1923 թ. դեկտեմբերի որոշմամբ նախկին Կենտրոնական դպրոցում բացվում է Բ աստիճանի (7-ամյա) դպրոցը, որտեղ իրենց հետագա ուսումը պետք է շարունակեին Ա աստիճանն ավարտած դպրոցների սաները (տե՛ս Ընկ. Լուկաշինը Զանգեզուրում, «Կարմիր ռաշպար», Գորիս, 1923, սեպտեմբերի 6, № 21, տե՛ս նաև **Ամիրյան Ս.**, Լուսավորության խնդիրը Զանգեզուրում, «Կարմիր ռաշպար», Գորիս, 1923, դեկտեմբերի 22, № 31): Ս. Լուկաշինի կարգադրությամբ Զանգեզուրի գավգործկոմի ջանքերով սեպտեմբերի 15-ից մինչև 1924 թ. հունվարի 15-ը «...նախկին կենդրոն.[ական] վարժարանի (իմա՝ Սբ Հռիփսիմե ծխական դպրոցը - Գ. Ս.) շենքի առաջին հարկն ամբողջովին հիմնական վերաշինութեան է ենթարկվել...», որտեղ 1924 թ. փետրվարի 9-ից բացվում է Ս. Լուկաշինի անվան 7-ամյա դպրոցը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, g. 1, գ. 472, թ. 54, 70):

1933-1934 թթ. ուսումնական տարում դպրոցը դարձել է լրիվ միջնակարգ (10-ամյա): Ցուցաբերած բարձր ցուցանիշների համար 1935-1936 թթ. ուսումնական տարվանից դպրոցը համարվել է օրինակելի N 1 միջնակարգ դպրոց (տե՛ս «Կարմիր Զանգեզուր», Գորիս, 1936, հունվարի 27, N 5, տե՛ս նաև մայիսի 23, N 36, տե՛ս նաև «Ստալինյան դրոշով», Գորիս, 1938, մայիսի 30, N 39): Մուշեղ Ադունցի տնօրինության օրոք, 1935-1936 թթ. ուսումնական տարում, դպրոցը տվել է անդրանիկ միջնակարգ շրջանավարտը (տե՛ս **Ադունց Մ.**, Ինչպես ենք նախապատրաստվում քննություններին, «Կարմիր Զանգեզուր», Գորիս, 1936, մայիսի 21, N 35): Տնօրեն Ռուբեն Պետրոսյանի օրոք 1940 թ. սեպտեմբերի 1-ից դասերն անցկացվել են ներկայիս Ա. Բակունցի անվան դպրոցի տեղում կառուցված շինությունում (տե՛ս **Հախվերդյան Ս.**, Գորիսի ամփոփ պատմություն, էջ 318):

Գորիսի շրջխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1956 թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ դպրոցն անվանակոչվել է մեծանուն արձակագիր Ակսել Բակունցի անունով: Որոշման մեջ ասվում է. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովետահայ նշանավոր գրող Ակսել Բակունցը ծնվել է Գորիս քաղաքում, ավարտելով ուսումը՝ երկար տարիներ որպես ուսուցիչ աշխատել է Զանգեզուրի տարբեր վայրերում, իսկ հետագայում որպես գրող՝ նրա գրական ստեղծագործությունների համար նյութ են ծառայել հիմնականում Գորիսի շրջանի բնաշխարհը, նրա անցյալն ու առօրյան, և երբ նա իր գրական ժառանգությամբ խոշոր ներդրում է արել սովետահայ գրականության մեջ, աշխատավորների դեպուտատների Գորիսի շրջանային Սովետի գործկոմը որոշեց Գորիսի N 1 միջնակարգ դպրոցը և Տախտակներ թաղամասի կենտրոնական փողոցը կոչել **Ակսել Բակունցի** անվամբ» (Շրջսովետի գործկոմում, «Որոտան», Գորիս, 1956, սեպտեմբերի 30, N 80): Դպրոցի ներկայիս հասցեն է՝ Անկախության փ. 64 շենք:

THE BEGINNING OF EDUCATIONAL ACTIVITIES IN GORIS : FROM THE HISTORY OF ST. HRIPSIME PARISH SCHOOL (1890-1920) - GEVORG STEPANYAN - In the center of Zangezur province, Goris, St. Hripsime Church and Parish Two-Years School For Boys was founded in 1890-1891 semester. Since its founding the school was engaged exceptionally in patriotic activities educating many children. School´s activity has been put on certain regulated basis when Goris-born pedagogue, publisher, editor and journalist Simeon Ter-Minasyan was the senior teacher there. The school played a valuable role in the educational and cultural life of not only Goris, but of whole province.

ЗАРОЖДЕНИЕ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В ГОРИСЕ. ИЗ ИСТОРИИ ПРИХОДСКОЙ ШКОЛЫ ЦЕРКВИ СВ. РИПСИМЕ (1890-1920 ГГ.) - ГЕВОРГ СТЕПАНЯН - Приходская школа для мальчиков церкви Св. Рипсиме провинциального центра Зангезура Гориса была основана в 1890-1891 учебном году. Сразу после учреждения школа занялась исключительно патриатической деятельностью, дав образование и воспитание многочисленным школьникам. Деятельность школы была получила регламентироваанный характер, когда там в качестве старшего преподавателя преподавал родом из Гориса педагог, издатель, редактор и журналист Симеон Тер-Минасян. Школа сыграла неоценимую роль в образовательной и культурной жизни не только Гориса, но и всей области.